Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

15-16(373-374)
22.05.2014
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԼԱՎԱ ԱՍՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԽՈՍՔԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ շրջանավարտներ

Իմ ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթանքներն եմ հղում բոլորիդ՝ դպրոցում ուսումնառության ավարտի կապակցությամբ:

Ձեզ համար այս օրն, անշուշտ, հիշարժան է, որովհետև հրաժեշտ եք տալիս մի օջախի, որի հետ են կապված ձեր մանկության ու պատանեկության լավագույն տարիները, և որ առավել կարևոր է՝ հենց այստեղ են ձևավորվել ձեր մարդկային լավագույն հատկանիշները, ընդարձակվել աշխարհճանաչողության սահմանները: Ուսումնառության ընթացքում դուք ոչ միայն ստացել եք անհրաժեշտ գիտելիքներ, այլև սովորել եք լինել ազնիվ ու հայրենասեր: Համոզված եմ, այդ ամենը նպաստելու են, որպեսզի կարողանաք դառնալ արժանապատիվ քաղաքացիներ, ապահովել ձեր ակտիվ մասնակցությունը Արցախի պետականաշինության գործընթացին:

Դպրոցական վերջին զանգով բացվում է նոր էջ ձեր կենսագրության մեջ, և այդ զանգի հպարտ ղողանջներն ուղեկցելու են կյանքի ամեն մի նոր փուլում՝ ազդարարելով հերթական շրջադարձի մասին: Դրա համար, այս պատասխանատու պահին, հարկավոր է ընտրել սեփական կարողություններին ու նախասիրությանը համահունչ մասնագիտություն, գտնել ճիշտ տեղը կյանքում:

Այսօր յուրահատուկ տոն է նաև մանկավարժների համար, որովհետև նրանց տարիների ջանքերը, ի դեմս շրջանավարտների, պիտի սկսեն պտուղ տալ: Այդ պատասխանատվության գնահատումով էլ ուզում եմ շնորհավորել մանկավարժներին՝ հավատացած լինելով, որ նրանց նվիրյալ աշխատանքն իզուր չի անցել, և կյանքի ուղեգիր ստացող նոր սերունդն անպայման արդարացնելու է բոլորիս հույսերը: Հավատացած եմ, որ 2014 թվականի շրջանավարտների համար նույնպես անսպառ են երախտագիտության խոսքերը, և հարազատ դպրոցին հրաժեշտ տալիս՝ իրենց ուսուցիչների անձի ու անուրանալի վաստակի առաջ խոնարհումը յուրօրինակ երդում կդառնա:

Սիրելի շրջանավարտներ, թող կյանքի դռները լայնորեն բացվեն՝ կանաչ լույս վառելով ձեր երազանքների առաջ:

Բարի՜ երթ մեծ կյանք:

ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Մայիսի 15-ին ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը Շուշիում հանդիպում ունեցավ Արցախի գրողների միության մի խումբ անդամների հետ: Հանդիպումը կայացավ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության նորակառույց շենքի նիստերի դահլիճում: Ներկա էին ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Մարատ Մուսայելյանը, կրթության և գիտության նախարար Ս. Ասրյանը, մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը, Շուշիի շրջվարչակազմի ղեկավար Վլադիկ Կասյանը:

Բակո Սահակյանը գրողներին ողջունեց նախարարության նորաբաց ցուցահանդեսի սրահում, որտեղ ցուցադրվում էին խեցեգործ Արման Ղազարյանի գործերը՝ կավից պատրաստված զանազան իրեր, գորգեր: Այնուհետև տեղի ունեցավ այցելություն Ղուկասյան եղբայրների անվան Արցախի բարբառի և ազգագրության ուսումնասիրության նորաբաց կենտրոն:

Անկեղծ ու անբռնազբոսիկ զրույցը շարունակվեց նիստերի դահլիճում: Գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանը համառոտակի անդրադարձավ գրական կյանքում տեղի ունեցող իրադարձություններին, ԳՄ առաջիկա անելիքներին: Խոսք եղավ նաև 2012թ. հոկտեմբերին Ստեփանակերտում կայացած պոեզիայի միջազգային փառատոնի մասին, որին մասնակցելու համար Ստեփանակերտ էին ժամանել բանաստեղծներ Ռումինիայից, Բուլղարիայից, Սերբիայից, Ռուսաստանից, Սիրիայից, Լիբանանից, Վրաստանից և այլ երկրներից: Նման միջոցառում առաջին անգամ էր կազմակերպվում տարածաշրջանում և լայն արձագանք էր գտել հայկական և օտարալեզու մամուլում:

Անդրադարձ եղավ գրողների հոբելյանական միջոցառումներին, որոնք հանրապետության նախագահի գնահատմամբ՝ կազմակերպվում են ցածր մակարդակով: Բ. Սահակյանը կոչ արեց զերծ մնալ ցածրաճաշակ միջոցառումներից և գեղարվեստական նոր մակարդակ հաղորդել հոբելյանական երեկոներին: Այս համատեքստում նա հանձնարարեց մշակել նոր տարբերակներ՝ նմանատիպ միջոցառումներն ավելի հետաքրքիր ու տպավորիչ դարձնելու համար: Հանրապետության նախագահը միաժամանակ մտահոգություն հայտնեց, որ գրող-հասարակություն կապերն ամուր չեն, ընթերցող շրջանակները քաջատեղյակ չեն գրական անցուդարձին: Քանի որ գրողներն իրենց ստեղծագործություններով արտացոլում են երկրի հասարակական-քաղաքական, սոցիալ-մշակութային կյանքը, ուստի տպագրվող գործերը պետք է ներկայացնեն իրական ժամանակը և հանդիսանան հասարակության հոգևոր սննդի աղբյուրը:

Ելույթ ունեցան նաև հանդիպմանը ներկա մյուս գրողները: Բարձրացված հարցերը վերաբերում էին գրողի սոցիալական վիճակին, նրանց հասարակական դիրքի բարձրացմանը և այլն:

Առաջարկվեց հաճախակի այցելություններ կազմակերպել հանրապետության ծայրամասային բնակավայրեր, որտեղի բնակիչների մոտ գրականության հանդեպ սեր ու հարգանք սերմանելու կարիք կա: Որոշվեց սահմանել Նախագահի մրցանակ, կյանքի կոչել հոնորարների քաղաքականությունը, որը ստեղծագործական խթան կհանդիսանա գրչի մշակների համար:

ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը նույնպես ելույթ ունենալով՝ առաջարկեց գրողների ստեղծագործությունների ընթերցումներ կազմակերպել՝ դրանով իսկ նրանց գործերը հասու դարձնելով ընթերցողին:

ԼՂՀ Նախագահը, ուշադիր լսելով բոլոր ելույթ ունեցողներին, խոստացավ հնարավորինս լուծել գրողներին հուզող խնդիրները:

Կարինե ՓԱՊՅԱՆ

ԱՐՄԱՏԸ ՀՈԴՈՒՄ, ՀԱՅԱՑՔԸ՝ ՀԵՌՈՒՆ

Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղը ԼՂՀ այն առանձնահատուկ բնակավայրերից է. որը հիմնահատակ ավերված լինելով Արցախյան պատերազմի ժամանակ, ազատագրվելուց անմիջապես հետո ոչ միայն ոտքի կանգնեց, այլև արագ թափով բնակչության աճ է արձանագրում: «Հայաստան» համահայկական հիմնադրամի և ԼՂՀ կառավարության համաֆինանսավորմամբ 2011թ. գյուղում շահագործման հանձնվեց նորակառույց դպրոցի շենքը, որտեղ սովորում է 151 աշակերտ: Նշենք, որ վերջին հինգ տարում աշակերտների թվաքանակն ավելացել է 50-ով: Այսօր հրատապ է նաև մանկապարտեզ ունենալու հարցը: Գյուղում կա մինչև հինգ տարեկան 100 երեխա: Հատկանշական է և այն փաստը, որ քանակական աճի հետ մեկտեղ որակական աճ էլ կա: Վերջերս ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության հանձնաժողովը տեսչական ստուգումներ է իրականացրել դպրոցում և արձանագրել զգալի տեղաշարժեր նախորդ ստուգման համեմատությամբ: Հանձնաժողովը, ինչպես նաև շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Ժ. Դավթյանն ընդգծել են, որ ուսման առաջադիմության և որակի աճը մեծ չափով ապահովում են երիտասարդ ուսուցիչները՝ ևս մեկ վառ վկայություն գյուղի վաղվա գեղեցիկ օրվա մասին:

Վաղուհասին էլ հատուկ են այն սոցիալ-տնտեսական դժվարությունները, որ առկա են մյուս բնակավայրերում: Սակայն նրա բնակիչներն ամուր կառչած են հողին և շենացնում են այն: Վառ հայրենասիրությունն արտահայտվում է ոչ միայն մարտի դաշտում կենաց-մահու կռիվ մղելով, այլև խաղաղ պայմաններում հող մշակելով, երեխաներ բազմացնելով, գյուղը զարգացնելով: Տեղին ենք համարում հիշատակել ԼՂՀ ՊԲ հրետանու նախկին պետ՝ գեներալ-լեյտենանտ Ժորա Գրիգորյանի գնահատականը. «Վաղուհաս գյուղի մասին ասեմ, որ այդ տղաների հանդեպ հատուկ վերաբերմունք ունեմ և առանձնահատուկ կարծիք: Նրանք առանձնանում էին թե՛ հայրենասիրությամբ, թե՛ նվիրվածությամբ ու ինքնադրսևորմամբ: Դրանք հատուկ երիտասարդներ են ոչ միայն Մարտակերտի շրջանում, այլև ողջ Ղարաբաղում: Ես նրանց առանձնացնում եմ ու ամենաբարձր գնահատականը տալիս»:

Գյուղի և ԿՊՏ կողմից դպրոցում իրականացված ստուգումների մասին ավելի հանգամանալից կներկայացնենք առաջիկայում:

ԴԻՄՈՐԴ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2012 թվականի
մայիսի 14 -ի N 301-Ն որոշման

ԿԱՐԳ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՏԵՂԵՐԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի (այսուհետ՝ բուհեր) ընդունելության գործընթացը, որը ներառում է բուհերի մասնագիտությունների հայտագրումը, ընդունելության քննությունների կազմակերպումը, անցկացումը, ընդունելության քննությունների արդյունքների բողոքարկումը, ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա բուհերի ընդունելության մրցույթի անցկացումը:

2. Բուհերն առկա ուսուցմամբ ընդունելությունը կատարում են տվյալ ուսումնական տարվա համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի համաձայն:

3. Բուհեր կարող են ընդունվել միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող անձինք (այսուհետ՝ շրջանավարտ)՝ առանց տարիքի սահմանափակման:

4. Օտարերկրյա քաղաքացիները (այսուհետ՝ օտարերկրացիներ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուհեր կարող են ընդունվել համաձայն սույն կարգի (ընդհանուր հիմունքներով) կամ ըստ ուսումնական հաստատություններում օտարերկրացիների ընդունելության կարգի:

5. Բուհեր ընդունվելու համար տվյալ ուսումնական տարվա և նախորդ տարիների շրջանավարտները (այսուհետ՝ դիմորդ) հանձնում են ընդունելության քննություններ: Ընդունելության քննություններն անցկացվում են քննական կենտրոններում: Քննական կենտրոններում պարտադիր է բժշկի ներկայությունը:

Բուհեր ընդունվելու համար դիմորդները բուհերի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել նաև միջնակարգ կրթության ատեստատի կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի՝ պետական ավարտական քննությունների գնահատականներով, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականով, եթե տվյալ մասնագիտության քննական առարկան բուհերի ընդունելության քննությունների ցանկում նշված է երկու աստղանիշով:

(5-րդ կետը լրաց. 13.05.2014 N297-Ն)

6. Ընդունելության քննությունները միասնական, կենտրոնացված և ներբուհական քննություններն են: Ընդունելության քննությունները և ըստ բուհերի մրցույթը կազմակերպում և անցկացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ գնահատման և թեստավորման կենտրոն):

Տվյալ ուսումնական տարում դիմորդներն ընդունելության քննությունները կարող են հանձնել միայն մեկ անգամ:

Բուհերի ընդունելության մրցույթում ընդունելության քննությունների գնահատականներն առավելություն ունեն միջնակարգ կրթության ատեստատի կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի՝ պետական ավարտական քննության գնահատականների կամ տարեկան գնահատականների նկատմամբ:

(6-րդ կետը լրաց. 25.04.2013 N220-Ն,13.05.2014 N297-Ն)

7. Միասնական քննություններն անցկացվում են գրավոր, թեստերի միջոցով: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ տարածքում դիմորդները յուրաքանչյուր առարկայի միասնական քննությունը հանձնում են միևնույն օրը: Դիմորդները միասնական քննությունները հանձնում են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից:

8. Միասնական քննություններն անցկացվում են երկու փուլով՝ հիմնական և լրացուցիչ: Հիմնական փուլի միասնական քննությունները տվյալ տարվա փետրվարի 1-ից մինչև մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտող և նախորդ տարիների շրջանավարտ դիմորդների կողմից հայտագրվող և տվյալ տարվա հունիսին դիմորդների կողմից հանձնվող միասնական քննություններն են: Լրացուցիչ փուլի միասնական քննությունները տվյալ տարվա հունիսի 24-ից հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում դիմորդների կողմից հայտագրվող և տվյալ տարվա հուլիսին դիմորդների կողմից հանձնվող քննություններն են:

9. Միասնական քննությունների տևողությունն է՝

1) «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն» առարկաների քննությունները՝ 180 րոպե.

2) «Օտար լեզու» առարկայի քննությունը՝ 150 րոպե:

10. Կենտրոնացված քննություններն այն քննություններն են, որոնք հնարավոր չէ անցկացնել թեստերի միջոցով՝ ելնելով տվյալ քննական առարկաների առանձնահատկություններից:

11. Կենտրոնացված է «Ստեղծագործական աշխատանք» գրավոր քննությունը:

(11-րդ կետը խմբ. 13.05.2014 N297-Ն)

12. Կենտրոնացված քննությունների տևողությունն է՝

1) գրավոր («Ստեղծագործական աշխատանք») քննությունը՝ 240 րոպե.

2) բանավոր քննությունների ժամանակ յուրաքանչյուր դիմորդին քննելու առավելագույն ժամանակը 30 րոպե է:

(12-րդ կետի 1-ին ենթակետը փոփ. 25.04.2013 N220-Ն)

13. Բուհերի ընդունելության միասնական և կենտրոնացված քննությունները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական ծրագրերով, հանրակրթական ուսումնական հաստատություններում պարտադիր օգտագործման երաշխավորված դասագրքերով և խնդրագրքերով: Քննական առաջադրանքները և գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է գնահատման և թեստավորման կենտրոնը:

14. Ներբուհական են՝ Արցախի պետական համալսարանի «Կերպարվեստ և գծագրություն», «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ», «Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն», Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի «Ճարտարապետություն և դիզայն» մասնագիտության «Նկարչություն» և «Գծագրություն» առարկաների, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի «Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն» մասնագիտության, Ստեփանակերտի «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտի «Հագուստի մոդելավորում» և «Դիզայն» մասնագիտությունների մասնագիտական առարկաների քննությունները:

(14-րդ կետը խմբ. 13.05.2014 N297-Ն)

15. Ներբուհական քննություններն անցկացվում են սույն կարգի 14-րդ կետում նշված բուհերի կողմից մշակված և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված մասնագիտական ծրագրերով: Քննական առաջադրանքները և գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է գնահատման և թեստավորման կենտրոնը:

16. Սույն կարգի համաձայն բուհերում ընդունելությունը կատարվում է՝

1) պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (այսուհետ՝ անվճար)՝ ըստ մասնագիտությունների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեղերի չափաքանակների.

2) բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (այսուհետ՝ վճարովի)՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած տեղերի:

17. Ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա անվճար և վճարովի ուսուցմամբ մրցույթների արդյունքները հաստատելու, արտոնություն ունեցող դիմորդների ցուցակներն ըստ մասնագիտությունների հաստատելու, անվճար և վճարովի ուսուցման համակարգում թափուր և պահուստային տեղերը վերաբաշխելու նպատակով ստեղծվում է հանրապետական ընդունող հանձնաժողով:

18. Հանրակրթական ուսումնական հաստատությունների այն շրջանավարտները, որոնց ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու» առարկան ատեստավորված չէ, ընդունելության քննությունները կարող են հանձնել ռուսերեն թարգմանությամբ միայն լրացուցիչ փուլում, բացառությամբ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և մյուս օտար լեզուների քննությունների:

19. Սույն կարգի պահանջները չեն տարածվում այն պետական բուհերի վրա, որոնք իրականացնում են զինվորական, ոստիկանական մասնագիտական կրթական ծրագրեր:

II. ՄԻԱՍՆԱԿԱՆ, ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ

20. Միասնական, կենտրոնացված քննության դիմում-հայտերը լրացնելը, ընդունելը և մուտքագրելը՝

1) դիմորդը միասնական, կենտրոնացված քննությանը մասնակցելու համար լրացնում է միասնական, կենտրոնացված քննության դիմում-հայտ (այսուհետ՝ քննության դիմում-հայտ), իսկ քննության դիմում-հայտը փոփոխելու, ճշգրտելու և հաստատելու համար լրացնում է ցուցակ: Քննության դիմում-հայտի և ցուցակի ձևերը հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը.

2) գնահատման և թեստավորման կենտրոնը տվյալ տարվա հունվարի 20-ից առնվազն հինգ անգամ զանգվածային լրատվության միջոցներով (որից երկու անգամը՝ առնվազն 1000 օրինակ տպաքանակ ունեցող թերթերում) հրապարակում է հայտարարություն, որում պարտադիր նշվում են քննության դիմում-հայտերի ընդունումն սկսելու և ավարտելու ժամկետները, ընդունող հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ դպրոց) անվանումները.

3) դիմորդները քննությանն առնչվող հարցերի մասին տեղեկատվություն կարող են ստանալ դպրոցներից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժիններից (այսուհետ՝ կրթության բաժիններ), գնահատման և թեստավորման կենտրոնից՝ անմիջականորեն կամ համացանցային կայքի միջոցով.

4) դպրոցը կրթության բաժիններից ու գնահատման և թեստավորման կենտրոնից ստանում և դիմորդներին է տրամադրում քննությունների դիմում-հայտերը.

5) դիմորդը քննության դիմում-հայտին կցում է անձնագրի, դրա բացակայության դեպքում՝ ծննդյան վկայականի պատճենը, մեկ լուսանկար (3x4 սմ չափսի), յուրաքանչյուր քննության մասնակցության համար գնահատման և թեստավորման կենտրոնի համապատասխան հաշվեհամարին փոխանցված 1500 դրամ վճարի անդորրագիրը և ներկայացնում դպրոցի տնօրենին.

6) դպրոցի տնօրենն ստուգում է դիմորդի կողմից քննության դիմում-հայտի ճիշտ լրացված լինելը, պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դիմորդին տալիս է ստացական.

7) նախորդ տարիների շրջանավարտների քննությունների դիմում-հայտերի ընդունումը կազմակերպվում է գնահատման և թեստավորման կենտրոնում.

8) միասնական, կենտրոնացված քննությունների հայտագրումը կատարվում է հետևյալ եղանակով՝

ա. էլեկտրոնային փոստ ունեցող դպրոցը դիմորդների տվյալները գնահատման և թեստավորման կենտրոն է ուղարկում էլեկտրոնային կապով,

բ. էլեկտրոնային փոստ չունեցող դպրոցի տնօրենը դիմորդների տվյալները գնահատման և թեստավորման կենտրոն է ուղարկում տարածաշրջանի՝ այդ նպատակով առանձնացված դպրոցի էլեկտրոնային կապի միջոցով.

9) դպրոցը քննության դիմում-հայտերը, անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը, քննության մասնակցության վճարի անդորրագիրը, անհրաժեշտության դեպքում նաև դիմորդների տվյալներով էլեկտրոնային կրիչները գնահատման և թեստավորման կենտրոն է ուղարկում կրթության բաժինների միջոցով.

10) գնահատման և թեստավորման կենտրոնում քննությունների դիմում-հայտերի ընդունումն սկսվում է տվյալ տարվա փետրվարի 1-ին և ավարտվում տվյալ տարվա մարտի 1-ին.

11) դիմորդի մասին մուտքագրված տվյալների համապատասխանությունը հաստատելու, ճշգրտում, փոփոխություն կատարելու և քննության մասնակիցների ցուցակը վերահաստատելու նպատակով գնահատման և թեստավորման կենտրոնը մինչև տվյալ տարվա մարտի 30-ը կրթության բաժինների միջոցով տվյալներն ուղարկում է դպրոց:

21. Քննության դիմում-հայտում փոփոխություն, ճշգրտում կատարելը կամ քննության նոր դիմում-հայտ ներկայացնելը՝

1) դիմորդը քննության դիմում-հայտում կարող է փոփոխություն, ճշգրտում կատարել կամ քննության նոր դիմում-հայտ ներկայացնել մինչև տվյալ տարվա ապրիլի 5-ը.

2) քննության դիմում-հայտում փոփոխու-

ԿԱՐԳ

թյուն, ճշգրտում կատարելու, այն հաստատելու կամ քննության նոր դիմում-հայտ ներկայացնելու համար դիմորդը դիմում է դպրոցի տնօրենին և համապատասխան ցուցակում կատարում փոփոխություն, ճշգրտում: Դպրոցի տնօրենը ճշգրտված, փոփոխված ցուցակները կամ քննության դիմում-հայտերը կնքում և մինչև ապրիլի 10-ը կրթության բաժինների միջոցով ուղարկում է գնահատման և թեստավորման կենտրոն.

3) գնահատման և թեստավորման կենտրոնը դիմորդների փոփոխված և քննության նոր դիմում-հայտերի հիման վրա տվյալների բազայում (այսուհետ՝ բազա) կատարում է համապատասխան փոփոխություններ.

4) քննության դիմում-հայտերի տվյալների վերջնական մուտքագրումից հետո գնահատման և թեստավորման կենտրոնը պատրաստում է դիմորդների ցուցակներն ըստ քննական առարկաների և կենտրոնների.

5) հաստատված ցուցակների հիման վրա դիմորդներին տրվում են անցաթղթեր, որոնք գնահատման և թեստավորման կենտրոնը մինչև տվյալ տարվա մայիսի 20-ը ուղարկում է դպրոցներ.

6) անցաթուղթը պարունակում է դիմորդի տվյալները (անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի կամ ծննդյան վկայականի սերիան, համարը, մարզը (շրջանը), դպրոցը, անձնական համարը), լուսանկարը, քննական կենտրոնի գտնվելու վայրը, առարկան, քննության օրը և ժամը.

7) դիմորդն անցաթուղթն ստանում է այն դպրոցից, որտեղ լրացրել է քննության դիմում-հայտ: Անցաթուղթը դիմորդին տրվում է ստորագրությամբ:

III. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

22. Դիմորդները կենտրոնացված և ներբուհական քննություններին, ինչպես նաև մասնագիտությունների մրցույթին մասնակցելու համար ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը հանձնում են այն բուհում, որի մասնագիտությունն ընդունելության դիմում-հայտում հայտագրել են առաջինը:

Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի դիմորդների ընդունելությունը կազմակերպվում է սույն կանոնների համաձայն, և դիմում-հայտի ու փաստաթղթերի ընդունումն իրականացվում է Արցախի պետական համալսարանում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական բուհերի այն մասնագիտությունների, որոնց համար նախատեսված են կենտրոնացված և ներբուհական քննություններ, և այդ դիմորդների փաստաթղթերի ընդունումն ու ընդունելությունն իրականացվում է համապատասխան բուհերում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից տրված երաշխավորագրերի հիման վրա՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բուհերի ընդունելության կարգի:

(22-րդ կետը խմբ. 25.04.2013 N220-Ն)

23. Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են տվյալ տարվա մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում՝ մինչև ժամը 18:00-ն:

(23-րդ կետը փոփ. 25.04.2013 N220-Ն)

24. Օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների, նույն տարվա գարնանային զորակոչից զորացրված կամ մինչև հուլիսի 31-ը զորացրվող դիմորդների, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտների փաստաթղթերն ընդունվում են հունիսի 25-ից հունիսի 30-ը՝ մինչև ժամը 18:00-ն:

(24-րդ կետը լրաց.13.05.2014 N297-Ն)

25. Դիմում-հայտերի հանձնման ընթացքին հետևելու համար գնահատման և թեստավորման կենտրոնն ուղարկում է դիտորդներ՝ բուհերի ներկայացուցիչներից, որոնց ցանկը բուհի ռեկտորի ներկայացմամբ հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը: Դիտորդները, առանց գործընթացին միջամտելու, իրավունք ունեն իրենց դիտարկումները ներկայացնել գնահատման և թեստավորման կենտրոն:

26. Փաստաթղթերի ընդունման ժամկետը լրանալուց հետո դիմորդների կողմից ներկայացված լրացուցիչ փաստաթղթերը չեն ընդունվում:

27. Ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերն ընդունման ժամկետի ավարտից հետո փոփոխման ենթակա չեն:

28. Բուհի ընդունելության գործընթացը կազմակերպում և իրականացնում է բուհի ընդունող հանձնաժողովը (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով):

29. Ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ռեկտորը (նախագահ), պրոռեկտորը (տեղակալ): Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին, պատասխանատու քարտուղարի տեղակալին (տեղակալներին) և անդամներին նշանակում է ընդունող հանձնաժողովի նախագահը: Ընդունող հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է տեխնիկական անձնակազմի միջոցով:

30. Դիմորդը փաստաթղթերը հանձնելու համար տեխնիկական անձնակազմի կողմից ստանում է անհրաժեշտ տեղեկություններ մասնագիտությունների ընտրության մասին, ծանոթանում դիմում-հայտը լրացնելու կարգին:

31. Դիմորդը կամ մինչև հուլիսի 31-ը զորացրվող դիմորդի կողմից տրված լիազորագրում նշված անձը լրացնում է ընդունելության դիմում-հայտը և ընդունելության համար պահանջվող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին:

(31-րդ կետը լրաց.13.05.2014 N297-Ն)

32. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը՝

1) ստուգում է զորակոչային տարիք ունեցող արական սեռի դիմորդների զինվորական հաշվառման փաստաթղթի նշումները տարկետման իրավունքի կամ չզորակոչվելու պատճառի վերաբերյալ, ժամկետային զինվորական ծառայության ավարտի մասին տեղեկանքը և թույլատրում ընդունելու փաստաթղթերը.

2) ստուգում է ընդունելության դիմում-հայտը, այն հաստատում ստորագրությամբ, տալիս է ստացական փաստաթղթերն ընդունելու մասին: Դիմորդը կամ մինչև հուլիսի 31-ը զորացրվող դիմորդի կողմից տրված լիազորագրում նշված անձը, հանձնելով ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը, ստորագրում է գրանցման մատյանում.

3) դիմորդին հայտնում է քննական թերթիկ ստանալու օրը.

4) ընդունելության դիմում-հայտերն ընդունման հաջորդ օրը հանձնում է գնահատման և թեստավորման կենտրոն՝ գրանցման մատյանում նշելով հանձնման ժամանակը, ընդունելության դիմում-հայտերի, մեդալակիրների, միջազգային մրցույթների հաղթողների և բանակից զորացրվածների թիվը:

(32-րդ կետը լրաց.13.05.2014 N297-Ն)

33. Ընդունելության դիմում-հայտերի հիման վրա գնահատման և թեստավորման կենտրոնում պատրաստվում են քննական թերթիկներ: Ընդունելության դիմում-հայտերը և քննական թերթիկները գնահատման և թեստավորման կենտրոն հանձնվելուց հետո եռօրյա ժամկետում գնահատման և թեստավորման կենտրոնը դրանք կնքում և վերադարձնում է ընդունող հանձնաժողով: Ընդունելության դիմում-հայտերը և քննական թերթիկները վավերացվում են բուհի կողմից:

34. Քննական թերթիկը դիմորդին հանձնվում է անձնագիրը և ստացականը նրա կողմից ներկայացվելուց հետո, որի համար դիմորդն ստորագրում է մատյանում:

35. Քննական թերթիկը պարունակում է դիմորդի տվյալները՝ անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի կամ ծննդյան վկայականի սերիան, համարը, լուսանկարը, անձնական համարը, պահպանվող միասնական քննությունների ցանկը, կենտրոնացված կամ ներբուհական քննությունները, դրանց հանձնելու օրը և ժամը, հայտագրված մասնագիտությունները, օլիմպիադայի դիպլոմի առկայության փաստը, դիմորդի մեդալակիր լինելու փաստը, ինչպես նաև տեղեկություններ զինվորական ծառայության մասին:

36. Դիմորդը դիմում-հայտի հետ միասին ներկայացնում է՝

1) լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ).

2) 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի).

3) փաստաթուղթ զինվորական ծառայության առնչության մասին (զորակոչային տարիք ունեցող արական սեռի դիմորդներից փաստաթղթերն ընդունվում են զինվորական հաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշման առկայության դեպքում, իսկ նախկինում առողջական վիճակի կապակցությամբ տարկետում ստացածներից՝ ռազմաբժշկական կենտրոնական հանձնաժողովի նշումների առկայության դեպքում).

4) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, նույնականացման քարտ, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական), անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ.

5) զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունն անցած լինելու մասին.

6) սույն կարգի 98-րդ և 99-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր.

7) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները.

8) կենտրոնացված և ներբուհական յուրաքանչյուր քննության մասնակցելու, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար 1500-ական դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը:

(36-րդ կետը լրաց.13.05.2014 N297-Ն)

37. Տվյալ ուսումնական տարվա շրջանավարտները, տվյալ տարվա գարնանային զորակոչից զորացրված դիմորդները, օտարերկրացիները, ինչպես նաև միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացած դիմորդներն ավարտական փաստաթուղթը (ատեստատ, դիպլոմ) ներկայացնում են մինչև տվյալ տարվա հուլիսի 10-ը: Լրացուցիչ փուլում պետական ավարտական և միասնական քննություններ հանձնող դիմորդները միջնակարգ կրթության մասին ատեստատը բուհի ընդունող հանձնաժողովին են ներկայացնում մինչև տվյալ տարվա հուլիսի 13-ը:

38. Սույն կարգի 98-րդ և 99-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդներն ազատվում են ընդունելության քննությունների վճարից:

39. Ընդունող հանձնաժողովն առանձին սոցիալական խմբերի քաղաքացիների կարող է ազատել կենտրոնացված և ներբուհական քննությունների, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար սահմանված վճարից:

40. Մինչև հուլիսի 31-ը զորացրվող զինծառայողները կարող են դիմել նույն տարվա ընդունելության մրցույթին՝ մինչև զորակոչվելը ստացած միասնական քննությունների վկայագրով մասնակցելու համար: Մինչև հուլիսի 31-ը զորացրվող զինծառայողները զորամասի հրամանատարի կողմից տրված տեղեկանք են ներկայացնում այն մասին, որ նրանց զորացրումը տեղի է ունենալու մինչև նույն տարվա հուլիսի 31-ը: Սույն տեղեկանքը մինչև հուլիսի 31-ը զորացրվող զինծառայողի կողմից տրված լիազորագրում նշված անձը ներկայացնում է բուհի ընդունող հանձնաժողովին: Լիազորագրում մինչև հուլիսի 31-ը զորացրվող զինծառայողը նշում է բուհերի ընդունելության մրցույթին մասնակցության մասնագիտությունները, որոնք լիազորագրում նշված անձը ընդունելության դիմում-հայտում հայտագրում է լիազորագրում նշված հերթականությամբ: Մինչև հուլիսի 31-ը զորացրվող զինծառայողների վրա տարածվում են սույն կարգի 100-րդ կետով սահմանված դրույթները:

41. «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաները մրցութային համարվելու դեպքում գնահատման և թեստավորման կենտրոնը դիմորդին է տալիս վկայագիր, որը դիմորդը, բուհ ընդունվելու դեպքում, համապատասխան բուհ է ներկայացնում մինչև հուլիսի 10-ը:

(40-րդ կետը խմբ.13.05.2014 N297-Ն)

IV. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ

42. Դիմորդներն ընդունելության դիմում-հայտում իրենց ընտրությամբ և ցանկացած հաջորդականությամբ հայտագրում են մասնագիտություններն ըստ ուսուցման անվճար և վճարովի համակարգերի: Համաձայն ընդունելության դիմում-հայտի՝ դիմորդը կարող է մասնակցել մեկ կամ մի քանի բուհերի, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերին՝ մինչև երկու անվճար և մինչև ութ վճարովի մասնագիտությունների մրցույթին՝ հանձնելով այդ մասնագիտությունների քննությունները:

43. Տվյալ տարվա միասնական քննություններին մասնակցած դիմորդները կարող են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից ստացած գնահատականները պահպանել միայն հաջորդ տարվա համար: Պահպանելով գնահատականը՝ դիմորդը կարող է նաև վերահանձնել այն և մրցույթին մասնակցել ավելի բարձր գնահատականով: Անբավարար գնահատական ստանալու դեպքում դիմորդը զրկվում է մրցույթին մասնակցելու իրավունքից:

44. Զորակոչային տարիքը լրացած, միասնական քննություններին և մրցույթին մասնակցած, բայց բուհ չընդունված արական սեռի դիմորդները կարող են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից ստացած գնահատականները պահպանել ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո կազմակերպվող ընդունելության քննությունների առաջին մրցույթի համար:

45. Չի թույլատրվում դիմորդի կողմից ներկայացնել մեկից ավելի ընդունելության դիմում-հայտ: Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի դիմորդները լրացնում են առանձին դիմում-հայտ, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուհերի համար ևս դիմում-հայտ ներկայացնելու դեպքում՝ դրանք համարակալվում են ըստ առաջնահերթության: Բազայում նույն դիմորդի՝ մեկից ավելի ընդունելության դիմում-հայտերի առկայության դեպքում տվյալ դիմորդը զրկվում է ընդունելության քննություններին և մրցույթին մասնակցելու իրավունքից:

46. Դիմորդներն ընտրած մասնագիտությունների կրկնվող առարկաների քննությունները հանձնում են մեկ անգամ:

☞4

ԴԻՄՈՐԴ

3 47. Միջնակարգ կրթության ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից գնահատական չունեցող դիմորդները (Ա և Ա+Բ տարբերակները չհանձնած) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննության փոխարեն կարող են միասնական քննություն հանձնել օտար լեզվից (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն): «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննությանը փոխարինված «Օտար լեզու» առարկան չի կարող համընկնել տվյալ մասնագիտության միասնական քննությունների ցանկում ընդգրկված «Օտար լեզու» առարկայի հետ: Ընդ որում՝

1) «030700 - Միջազգային հարաբերություններ», «030600 – Լրագրություն», «031000 - Հայոց լեզու և հայ գրականություն», «051000 - Մանկավարժություն և հոգեբանություն», «051100 - Մանկավարժություն և մեթոդիկա», «051300 - Սոցիալական մանկավարժություն», «032300 - Թարգմանչական գործ» մասնագիտությունների դեպքում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննությունը պարտադիր է.

2) «032400 - Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության համար սահմանված «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննության փոխարեն դիմորդները կարող են միասնական քննություն հանձնել «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն) առարկայից:

48. Միջնակարգ կրթության ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից (տարեկան, քննական) գնահատական չունեցող դիմորդները «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ոչ մրցութային քննության գնահատականի փոխարեն կարող են օգտագործել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ «Օտար լեզու» (ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն) առարկայի գնահատականը:

49. Համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից քննական գնահատական չունեցող դիմորդները «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից ոչ մրցութային քննության գնահատականի փոխարեն կարող են օգտագործել միջնակարգ կրթության ատեստատի «Հայոց լեզու» առարկայի տարեկան գնահատականը:

50. Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի դիմորդներին իրավունք է վերապահվում իրենց ընտրությամբ հանձնելու նշված երեք՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» մրցութային քննություններից երկուսը:

51. Սույն կարգի 50-րդ կետում նշված մասնագիտությունների համար մրցույթն անցկացվում է դիմորդի կողմից դիմում-հայտում նշված քննությունների հերթականությամբ: Հավասար միավորների դեպքում առավելություն է տրվում դիմում-հայտում առաջինը նշած առարկայի քննական գնահատականին:

V. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐՆ ՈՒՂՂԵԼԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼԸ

52. Դիմորդը կարող է ընդունելության դիմում-հայտում փոփոխություններ կատարել մինչև տվյալ տարվա հունիսի 1-ը՝ ժամը 18:00-ն: Տվյալ տարվա հունիսի 1-ից հետո դիմում-հայտը փոփոխման ենթակա չէ:

(52-րդ կետը փոփ. 25.04.2013 N220-Ն)

53. Օտարերկրացիները, տվյալ ուսումնական տարում օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները ավարտած՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիները, տվյալ տարվա գարնանային զորակոչից զորացրված դիմորդները և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի դիմորդները դիմում-հայտում փոփոխություններ կարող են կատարել մինչև տվյալ տարվա հունիսի 30-ը՝ ժամը 18:00-ն: Տվյալ տարվա հունիսի 30-ից հետո դիմում-հայտը փոփոխման ենթակա չէ:

(53-րդ կետը խմբ. 25.04.2013 N220-Ն)

54. Ընդունելության դիմում-հայտը լրացնելու օրը դիմորդը կարող է անձնագրի և ստացականի առկայության դեպքում հետ վերցնել կամ փոփոխություն կատարել ընդունելության դիմում-հայտում: Իսկ ընդունելության դիմում-հայտը լրացնելու հաջորդ օրվանից սկսած, մինչև ընդունելության դիմում-հայտերի և փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը, դիմորդը կարող է հետ վերցնել կամ փոփոխություն կատարել ընդունելության դիմում-հայտում՝ քննական թերթիկի և ստացականի առկայության դեպքում:

55. Ընդունելության դիմում-հայտը հետ վերցնելու կամ դրանում փոփոխություն կատարելու համար դիմորդը դիմում է ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին: Պատասխանատու քարտուղարն առանձնացնում է դիմորդի անձնական գործը, տալիս վերադարձման թույլտվություն՝ այն վավերացնելով բուհի կնիքով:

VI. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ՀԱՍՏԱՏԱԳՐՈՒՄԸ

56. Ընդունելության դիմում-հայտերի ընդունման ժամկետի ավարտից հետո ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն ու գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչն ստորագրում են ընդունելության դիմում-հայտերի բազայի մասին ակտ, որում նշվում են ընդունելության դիմում-հայտերի թիվը, քննությունների թիվը, քննությունների համար վճարված ընդհանուր գումարը, քննությունների վարձից ազատված դիմորդների թիվը:

57. Բազայում կատարվող բոլոր փոփոխությունների և ճշտումների մասին կազմվում է արձանագրություն:

58. Բազան էլեկտրոնային կրիչների տեսքով տվյալ տարվա հունիսի 2-ին հանձնվում է գնահատման և թեստավորման կենտրոն՝ ի պահ:

(58-րդ կետը փոփ. 25.04.2013 N220-Ն)

59.Օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների և տվյալ տարվա գարնանային զորակոչից զորացրված դիմորդների բազան էլեկտրոնային կրիչների տեսքով տվյալ տարվա հուլիսի 1-ին հանձնվում է գնահատման և թեստավորման կենտրոն՝ ի պահ:

60. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը դիմորդների արտոնությունները հաստատող փաստաթղթերի կրկնօրինակները մինչև տվյալ տարվա հուլիսի 10-ը հանձնում է գնահատման և թեստավորման կենտրոն:

VII. ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ՝ ԿՈՐՑՐԱԾ ՔՆՆԱԿԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

61. Դիմորդը քննական թերթիկը կորցնելու մասին դիմում է ներկայացնում ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին, որը դրա մասին անմիջապես զեկուցում է գնահատման և թեստավորման կենտրոնին:

62. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը գնահատման և թեստավորման կենտրոնից ստանում և 24 ժամվա ընթացքում դիմորդին է տալիս նոր քննական թերթիկ: Նոր քննական թերթիկում քննության օրերը չեն փոխվում՝ բացառությամբ սույն կարգի 64-րդ կետում նշված դեպքերի:

63. Եթե քննական թերթիկը կորել է քննության օրը, դիմորդն այդ քննությունը հանձնում է գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից նոր քննական թերթիկում նշանակված օրը:

64. Տվյալ առարկայի քննությունների վերջին օրը քննական թերթիկը կորցրած դիմորդին թույլատրվում է քննությունը հանձնել անձը հաստատող փաստաթղթի ու գնահատման և թեստավորման կենտրոնի տվյալների բազայի հիման վրա:

VIII. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

65. Միասնական քննությունների կազմակերպումը՝

1) միասնական քննությունները կազմակերպվում և անցկացվում են միասնական քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչև տվյալ տարվա ապրիլի 15-ը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարը (այսուհետ՝ նախարար)՝ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի ներկայացմամբ.

2) միասնական քննական կենտրոնների ղեկավարների (այսուհետ՝ կենտրոնի ղեկավար) ցանկը մինչև տվյալ տարվա մայիսի 4-ը հաստատում է նախարարը՝ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի ներկայացմամբ.

3) քննական կենտրոնի ղեկավարը կազմակերպում է քննական գործընթացը տվյալ քննական կենտրոնում՝ սույն կարգի պահանջներին համապատասխան.

4) միասնական քննությունների օրերն ըստ առարկաների հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը: Միասնական քննությունները կազմակերպվում են տվյալ տարվա հունիսի 1-ից մինչև հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում.

5) միասնական քննության անցկացման գործընթացի մասնակիցներն են՝ կենտրոնի ղեկավարը, նախարարի լիազորը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը (յուրաքանչյուր 60 դիմորդի համար գնահատման և թեստավորման կենտրոնի առնվազն մեկ ներկայացուցիչ), միասնական քննության ընթացքի կազմակերպիչը (այսուհետ՝ կազմակերպիչ) և պատասխանատու կազմակերպիչը, համակարգչային օպերատորը (այսուհետ՝ օպերատոր) և պատասխանատու օպերատորը, միասնական քննական կենտրոնի հերթապահը (այսուհետ՝ հերթապահ), ովքեր իրենց աշխատանքը միասնական քննությունների ընթացքում իրականացնում են գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի կողմից հաստատված աշխատակարգերի համաձայն.

6) միասնական քննական կենտրոնում միասնական քննության ընթացքը քննասենյակում կազմակերպում են գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչները և կազմակերպիչները: Կենտրոնի ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի համար տվյալ քննասենյակի կազմակերպիչներից մեկին նշանակում է պատասխանատու կազմակերպիչ.

7) համակարգչային աշխատանքներն իրականացնում են ուսուցում անցած օպերատորները, որոնց կազմը հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը: Գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը հաստատում է նաև պատասխանատու օպերատորների ցանկը, որոնք իրենց քննական կենտրոնում կազմակերպում են օպերատորների աշխատանքը: Հերթապահների կազմը հաստատում է քննական կենտրոնի ղեկավարը.

8) կազմակերպիչներն ըստ քննական կենտրոնների բաշխվում են քննության նախորդ օրը՝ գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի կազմակերպած վիճակահանության միջոցով: Նույն օրը գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը տվյալ քննական կենտրոնի ղեկավարին է հանձնում քննական կենտրոնի կազմակերպիչների ցուցակը.

9) քննական կենտրոնում քննասենյակները համարակալվում են հերթական համարներով: Քննական կենտրոնի դիմորդները բաժանվում են հերթական թվերով համարակալված խմբերի: Խմբում դիմորդների թիվը չի կարող գերազանցել 20-ը: Յուրաքանչյուր խմբի համար քննասենյակում աշխատանքները համակարգում են 1-ական կազմակերպիչներ.

10) քննական կենտրոնի քննասենյակների մուտքի մոտ նշվում են տվյալ քննասենյակի խմբերի հերթական համարները.

11) քննությունն սկսվելուց 1,5 ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը սահմանված ձևի արձանագրությունում գրանցում է կազմակերպիչներին, համակարգչային օպերատորներին և հերթապահներին.

12) քննությունն սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ կենտրոնի ղեկավարը գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի ներկայությամբ այն առևտրային բանկերից, որոնք իրականացնում են քննական թեստերի փաթեթների պահեստավորում, ստանում է քննական թեստերի փաթեթները: Կենտրոնի ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի պատասխանատու կազմակերպչին տալիս է տվյալ քննասենյակի խմբերի համար նախատեսված թեստերի պատասխանների ձևաթղթերի (այսուհետ՝ պատասխանների ձևաթուղթ) ծրարները, խմբերի դիմորդների ցուցակները, որից հետո սկսվում է դիմորդների մուտքը քննասենյակներ.

13) պատասխանների ձևաթղթերի ծրարը պարունակում է՝

ա. պատասխանների 20 ձևաթուղթ, որոնք տրվում են դիմորդներին,

բ. պատաս1խանների լրացուցիչ ձևաթղթեր, որոնք օգտագործվում են պատասխանների ձևաթղթերի խոտանման դեպքերում.

14) յուրաքանչյուր խմբի համար նախատեսվում է պատասխանների լրացուցիչ երկու ձևաթուղթ, որոնք մնում են քննական կենտրոնի ղեկավարի մոտ.

15) հերթապահներին տեղաբաշխում է քննական կենտրոնի ղեկավարը՝ կազմելով համապատասխան արձանագրություն.

16) քննության օրը դիմորդը քննությունն սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ ներկայանում է քննական կենտրոն՝ իր հետ ունենալով անցաթուղթը, անձը հաստատող այն փաստաթուղթը, որը նշված է դիմում-հայտում.

17) դիմորդների մուտքը կենտրոն սկսվում է քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով.

18) դիմորդն անձը հաստատող փաստաթուղթը և անցաթուղթը ներկայացնում է հերթապահին և նրա հրահանգով մոտենում օպերատորին: Օպերատորը համադրում է անցաթղթի և դիմորդի մասին բազայի տվյալները, բազայում կատարում նշում դիմորդի՝ քննությանը ներկայանալու մասին, իսկ անցաթղթի վրա գրում խմբի համարը: Հերթապահները, պատերին փակցված լրացուցիչ ուղեցույցները դիմորդներին օգնում են գտնել քննասենյակը և խումբը.

19) դիմորդի մուտքը քննասենյակ կազմակերպվում է ոչ պակաս, քան երկու կազմակերպիչների կողմից: Դիմորդը քննասենյակում չի կարող ունենալ այլ առարկաներ՝ բացառությամբ անձը հաստատող փաստաթղթի և անցաթղթի.

20) դիմորդը մոտենում է իր խմբի կազմակերպչին և ստանում պատասխանների ձևաթուղթը, ցուցակում ստորագրում իր անվան դիմաց և նստում ըստ վիճակահանության արդյունքի՝ համապատասխան նստարանին.

21) դիմորդներին քննասենյակում տեղավորելուց հետո քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը քննական կենտրոնի ղեկավարից գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի ներկայությամբ, ստանալով խմբերի թվին համապատասխան թեստերի փաթեթները, դրանք բերում է քննասենյակ: Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը թեստերի փաթեթները ցուցադրում է դիմորդներին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով փաթեթների փակ և ամբողջական լինելու հանգամանքի վրա.

22) քննությունն սկսվելուց 20 րոպե առաջ գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը կամ պատասխանատու կազմակերպիչը դիմորդների համար ընթերցում է քննասենյակում քննության անցկացման կարգը, տեղեկացնում բողոքարկման տեսակների և կարգի մասին: Դիմորդները պատասխանների ձևաթղթերում լրացնում են իրենց անունը, ազգանունը և անցաթղթերի անձնական համարները: Այնուհետև կազմա-

ԿԱՐԳ

կերպիչները մոտենում են դիմորդներին, կտրում պատասխանների ձևաթղթերի անձնական տվյալները պարունակող մասերը, հաշվում և հանձնում քննասենյակի պատասխանատու կազմակերպչին.

23) քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը պատասխանների ձևաթղթերի անձնական տվյալները պարունակող մասերն առնվազն երկու կազմակերպչի մասնակցությամբ հաշվում, ստուգում, այնուհետև տեղավորում է այդ նպատակով ստացված ծրարում՝ ծրարի վրա գրելով քննասենյակի, խմբերի համարները և կտրված մասերի թիվը:

(65-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերը խմբ. 25.04.2013 N220-Ն)

66. Միասնական քննության անցկացումը՝

1) թեստերի փաթեթները բացելու համար պատասխանատու կազմակերպիչը հրավիրում է առաջին նստարաններին նստած դիմորդներին (նրանցից որևէ մեկի բացակայության դեպքում՝ հաջորդ դիմորդին): Փաթեթների բացման վերաբերյալ արձանագրությունների համապատասխան տողում խմբերի կազմակերպիչները կատարում են նշում, որի դիմաց ստորագրում է փաթեթը բացած դիմորդը.

2) խմբերի կազմակերպիչները բաժանում են թեստերը: Դիմորդը, ստանալով իր թեստը, ստուգում է այն և թեստի շապիկի համապատասխան մասում գրում իր խմբի և նստարանի համարները: Պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տևողությունը և գրատախտակին նշում քննության սկիզբը և ավարտը.

3) միասնական քննությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր քննական կենտրոններում սկսվում է նույն ժամին՝ 9:30-ին.

4) ավելորդ (չօգտագործված, խոտանված) քննական թեստերի առկայությունը քննասենյակի պատասխանատու կազմակերպիչն արձանագրում է, հաշվարկում և հանձնում է քննական կենտրոնի ղեկավարին.

5) միասնական քննության ընթացքում արգելվում է խոսելը, տեղը փոխելը, թեստերը և պատասխանների ձևաթղթերը փոխանակելը, արտագրելը, բջջային հեռախոսներից կամ կապի այլ միջոցներից օգտվելը.

6) միասնական քննության ընթացքում քննասենյակից դիմորդը կարող է դուրս գալ միայն անհրաժեշտության դեպքում՝ զուգարանից օգտվելու կամ վատառողջության պատճառով՝ քննասենյակի պատասխանատու կազմակերպչի կամ գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի թույլտվությամբ և հերթապահի ուղեկցությամբ.

7) քննասենյակում թեստի բովանդակության վերաբերյալ դիմորդի հարցերը չեն քննարկվում.

8) միասնական քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող թեստերն ու պատասխանների ձևաթղթերը նորով փոխարինում է քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը՝ կենտրոնի ղեկավարի, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի ներկայությամբ՝ արձանագրելով այդ փաստը: Թերություններ ունեցող պատասխանների ձևաթղթերի և թեստերի վրա գրվում է «Խոտանված է».

9) դիմորդների կողմից քննական առաջադրանքների կատարման ժամանակ քննասենյակներում, բացի պատասխանատու կազմակերպչից և կազմակերպիչներից, կարող են ներկա գտնվել նախարարի լիազորը, քննական կենտրոնի ղեկավարն ու գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը.

10) միասնական քննության ավարտից 30 րոպե առաջ քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը դիմորդների ուշադրությունն է հրավիրում ժամանակի վրա և հիշեցնում առաջադրանքների պատասխանները թեստերից պատասխանների ձևաթղթերի վրա անցկացնելու մասին.

11) կազմակերպիչները քննության ամբողջ ընթացքում պետք է մնան քննասենյակներում՝ իրենց հատկացված տեղերում: Նրանց արգելվում է օգտվել բջջային հեռախոսներից և կապի այլ միջոցներից: Սույն պահանջների խախտման մասին գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը տեղյակ է պահում կենտրոնի ղեկավարին, որն էլ կարող է հեռացնել կազմակերպչին քննասենյակից: Կազմակերպչին քննասենյակից հեռացնելն արձանագրվում և ստորագրվում է գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի և կենտրոնի ղեկավարի կողմից.

12) գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը կամ պատասխանատու կազմակերպիչը իրավունք ունի մեկ անգամ նախազգուշացնելու դիմորդին, արձանագրելու նախազգուշացումը, կրկնվելու դեպքում, կենտրոնի ղեկավարին տեղեկացնելով, դիմորդին հեռացնելու քննասենյակից, եթե նա առանց թույլտվության դուրս է եկել քննասենյակից, խոսել է այլ դիմորդների հետ, տեղը փոխել է: Եթե դիմորդն օգտվել է բջջային հեռախոսից, կապի այլ միջոցներից, արտագրել է, ապա գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը տեղեկացնում է կենտրոնի ղեկավարին և խախտում թույլ տված դիմորդին հեռացնում քննասենյակից.

13) հեռացվող դիմորդից վերցվում է թեստը, դիմորդի պատասխանների ձևաթղթի վրա գրվում է «Հեռացված է քննությունից», տվյալ խմբի և քննասենյակի արձանագրությունների մեջ գրանցվում է այդ փաստը, հեռացվողի անունը, ազգանունը, հեռացման պատճառը.

14) դիմորդի՝ քննությունից հեռացվելու փաստը դիմորդի բողոքի հիման վրա քննարկվում է նախարարի հրամանով ստեղծված բողոքարկման հանձնաժողովում, որն ընդունում է որոշում դիմորդին լրացուցիչ քննությանը թույլատրելու մասին.

15) միասնական քննության ընթացքում հիվանդության պատճառով (բժշկի թույլտվությամբ) քննությունն ընդհատած դիմորդից վերցվում է թեստը, պատասխանների ձևաթղթի վրա գրվում է «Քննությունն ընդհատել է հիվանդության պատճառով», տվյալ խմբի և քննասենյակի արձանագրություններում գրանցվում է այդ փաստը՝ նշելով քննությունն ընդհատած դիմորդի անունը, ազգանունը.

16) հարգելի պատճառով միասնական քննությանը չներկայացած (փաստաթղթով հիմնավորված), հիվանդության պատճառով միասնական քննությունն ընդհատած, ինչպես նաև բողոքարկման հանձնաժողովի որոշմամբ լրացուցիչ միասնական քննությանը թույլատրված դիմորդը քննություն է հանձնում լրացուցիչ միասնական քննության օրը:

67. Միասնական քննության ավարտը՝

1) քննության համար նախատեսված ժամանակից շուտ ավարտած (ընդհատած) դիմորդը գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի թույլտվությամբ մոտենում է օպերատորին, պատճենահանում պատասխանների ձևաթուղթը, այնուհետև մոտենում իր խմբի կազմակերպչին: Թեստը և պատասխանների ձևաթուղթը դիմորդը կազմակերպչին է հանձնում՝ ստորագրելով իր խմբի դիմորդների ցուցակի համապատասխան տեղում: Կազմակերպիչը համեմատում է թեստի և պատասխանների ձևաթղթում նշված թեստի համարները: Պատասխանների ձևաթղթի պատճենահանված օրինակը դիմորդը պահում է իր մոտ.

2) քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները, յուրաքանչյուր դիմորդի պատասխանների ձևաթուղթը դնելով թեստի մեջ, հավաքում են սեղաններից, այնուհետև ընթերցում են թեստի վրա գրված սեղանի համարը, համապատասխան դիմորդը մոտենում է կազմակերպչին, վերցնում իր պատասխանների ձևաթուղթը, պատճենահանում, պատասխանների ձևաթուղթը հանձնում իր խմբի կազմակերպչին, ստորագրում իր անվան դիմաց դիմորդների ցուցակում և դուրս գալիս քննասենյակից: Այդ ընթացքում մյուս դիմորդները մնում են իրենց տեղերում՝ մինչև պատճենահանման իրենց հերթը հասնելը.

3) քննության ավարտից հետո քննասենյակի յուրաքանչյուր խմբից վերջինը դուրս եկող դիմորդի ներկայությամբ խմբի կազմակերպիչը պատասխանների ձևաթղթերը (օգտագործված, չօգտագործված, խոտանված), քննության ընթացքում հիվանդացած դիմորդին տրված բժշկի տեղեկանքը, դիմորդին քննությունից հեռացնելու, ինչպես նաև խոտանված ձևաթղթի մասին արձանագրությունները, խմբի դիմորդների ցուցակը հաշվում և հանձնում է պատասխանատու կազմակերպչին.

4) քննության ժամանակի ավարտից հետո ոչ ուշ, քան 30 րոպեի ընթացքում պատասխանատու կազմակերպիչը լրացնում է տվյալ քննասենյակում անցկացված քննության արձանագրությունը.

5) պատասխանատու կազմակերպիչը խմբերի պատասխանների ձևաթղթերի (օգտագործված, չօգտագործված, խոտանված), խմբերի դիմորդների ցուցակների ծրարները, քննասենյակի արձանագրության, պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի ծրարները և թեստերը (օգտագործված, չօգտագործված) հաշվում և հանձնում է կենտրոնի ղեկավարին.

6) կենտրոնի ղեկավարը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի հետ համատեղ, ներկայացված պատասխանների ձևաթղթերը, խմբերի ցուցակները պարունակող և քննասենյակներից ստացված կտրված մասերով ծրարները վերահաշվելով, ձևակերպում է քննական կենտրոնում անցկացված քննության արձանագրությունը:

68. Քննական նյութերի՝ թեստերի, պատասխանների ձևաթղթերի ծրարների, արձանագրությունների տեղափոխումը՝

1) կենտրոնի ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի պատասխանատու կազմակերպչի ներկայությամբ ծրարները տեղավորում է համապատասխան արկղում՝ գնահատման և թեստավորման կենտրոն տեղափոխելու համար.

2) քննական կենտրոնի ղեկավարը քննական նյութերը գնահատման և թեստավորման կենտրոն է տեղափոխում քննության ավարտից անմիջապես հետո: Նույն օրվա ընթացքում գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը քննական նյութերը տեղափոխում է Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոն.

3) Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնում քննական կենտրոնի ղեկավարի և քննական կենտրոնում գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի մասնակցությամբ ընդունվում են քննական նյութերը: Պատասխանների ձևաթղթերը հաշվվում և սկանավորվում են: Պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի հաշվումից հետո կազմվում է բոլոր նյութերի հանձնման և ընդունման արձանագրություն:

69. Պատասխանների ձևաթղթերի ստուգումը՝

1) պատասխանների ձևաթղթերն ստուգվում են Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնում՝ համակարգչային սարքավորումների ու ծրագրերի միջոցով.

2) թեստերը չեն ստուգվում: Սկանավորվում, ճանաչվում և գնահատվում են միայն պատասխանների ձևաթղթերը.

3) պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի վերծանումից հետո ստուգման տվյալները գրանցվում են որպես դիմորդի քննական արդյունք:

70. Միասնական քննությունների արդյունքների հրապարակումը՝

1) քննական աշխատանքների արդյունքները հրապարակվում են քննությունից հետո 5-րդ օրը.

2) գնահատման և թեստավորման կենտրոնում քննությունների արդյունքների ցուցակներն առանձնացվում են ըստ քննական կենտրոնների, առարկաների և քննություններին մասնակցած դպրոցների.

3) քննական աշխատանքների արդյունքների ցուցակները վավերացվում են գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի կողմից.

4) կենտրոնի ղեկավարն աշխատանքների ստուգման ավարտից հետո գնահատման և թեստավորման կենտրոնից ստանում է քննություն հանձնած դիմորդների քննական արդյունքների ցուցակը.

5) կենտրոնի ղեկավարը քննական արդյունքների ցուցակը փակցնում է քննական կենտրոնի տեղակայման հաստատության մուտքի մոտ: Միասնական քննությանը մասնակցած դիմորդների քննության ավարտական մասի քննական արդյունքների ցուցակը գնահատման և թեստավորման կենտրոնը կրթության բաժինների միջոցով ուղարկում է դպրոցներ.

6) միասնական քննության ավարտական մասի արդյունքը դպրոցը գրանցում է դիմորդի՝ միջնակարգ ընդհանուր կրթության ատեստատում.

7) դիմորդը քննության արդյունքի մասին տեղեկություն կարող է ստանալ իր դպրոցից, քննական կենտրոնից.

8) միասնական քննություններ հանձնած դիմորդներին տրվում են վկայագրեր, որոնցում նշվում են դիմորդի կողմից միասնական քննություններից ստացված միավորները.

9) վկայագրի ձևը հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը.

10) դիմորդները մինչև հունիսի 30-ը վկայագրերն ստանում են դպրոցներից՝ ներկայացնելով քննության դիմում-հայտերի լրացման համար հիմք ընդունված անձնագիրը կամ ծննդյան վկայականը:

71. Միասնական քննության արդյունքների և անցկացման կարգի խախտման բողոքարկումը՝

1) բողոքարկումը կարող է լինել՝

ա. քննության անցկացման կարգի խախտման մասին.

բ. քննության արդյունքի հետ անհամաձայնության մասին.

2) բողոք-դիմումը շարադրվում է ձևաթղթի վրա.

3) միասնական քննության անցկացման կարգի խախտման վերաբերյալ դիմորդը կարող է բողոքել քննության օրը (քննության պահին կամ ավարտից հետո՝ մինչև քննասենյակից դուրս գալը)՝ բողոքը ներկայացնելով պատասխանատու կազմակերպչին կամ գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչին.

4) բողոք-դիմումի պատճենի կամ երկրորդ օրինակի վրա պատասխանատու կազմակերպիչը կատարում է «Ընդունված է՝ բողոքարկման հանձնաժողով ներկայացնելու համար» նշումը և վերադարձնում դիմորդին.

5) պատասխանատու կազմակերպիչը գրում է բացատրություն՝ այն կցելով բողոք-դիմումին, և հանձնում կենտրոնի ղեկավարին.

6) կենտրոնի ղեկավարը, ստանալով պատասխանատու կազմակերպչի բացատրությունն ու դիմորդի բողոք-դիմումը, առանձին ծրարով, համապատասխան արձանագրության հետ միասին ներկայացնում է գնահատման և թեստավորման կենտրոն.

7) բողոքարկման հանձնաժողովը, քննարկելով բողոք-դիմումը, այն համարում է հիմնավոր, եթե գտնում է, որ բողոք-դիմումում շարադրված հանգամանքները դիմորդի կողմից առաջադրանքների ոչ լիարժեք կատարման պատճառ են դարձել.

8) բողոքարկման հանձնաժողովը բողոք-դիմումի վերաբերյալ որոշում է ընդունում բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում բողոքարկման հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայն.

9) բողոքը հիմնավոր համարելու դեպքում բողոքարկման հանձնաժողովը որոշում է ընդունում դիմորդին թույլատրել մասնակցելու լրացուցիչ քննությանը.

10) բողոքարկման հանձնաժողովը չի քննարկում բողոք-դիմում՝

ա. դիմորդի կողմից իր մեղքով քննական հրահանգների չկատարման հետևանքով առաջացած թերությունների վերաբերյալ,

բ. դիմորդի կողմից պատասխանների ձևաթղթի լրացման ընթացքում թույլ տրված վրիպումների կամ սխալների վերաբերյալ.

11) միասնական քննության արդյունքի հետ անհամաձայնության դեպքում դիմորդն արդյունքների հրապարակման հաջորդ օրը՝ ժամը 9:00-18:00-ը, կարող է բողոքարկել այն.

☞6

5 12) արդյունքի հետ անհամաձայնության վերաբերյալ բողոք-դիմումը դիմորդն անձամբ հանձնում է այն կենտրոնի ղեկավարին, որտեղ հանձնել է քննությունը: Կենտրոնի ղեկավարն ստացված բողոք-դիմումները գնահատման և թեստավորման կենտրոն է տեղափոխում բողոքարկման ժամկետի ավարտից հետո 24 ժամվա ընթացքում.

13) բողոք-դիմումի քննարկման արդյունքում կարող է որոշում ընդունվել քննության արդյունքի պահպանման, բարձրացման կամ իջեցման մասին: Բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման հիման վրա հիմնական փուլի միասնական քննությունների բողոքարկման արդյունքները հրապարակվում են տվյալ փուլի վերջին քննության ավարտից հետո եռօրյա ժամկետում, իսկ միասնական քննությունների լրացուցիչ փուլի բողոքարկման արդյունքները հրապարակվում են տվյալ փուլի վերջին քննության ավարտից հետո եռօրյա ժամկետում:

IX. ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

72. Կենտրոնացված ընդունելության քննությունները կազմակերպվում են տվյալ տարվա հունիսի 24-ից հուլիսի 8-ն ընկած ժամանակահատվածում:

(72-րդ կետը փոփ. 25.04.2013 N220-Ն)

73. Կենտրոնացված ընդունելության քննությունները կազմակերպվում են քննական կենտրոններում, որոնց ցանկը հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը՝ մինչև տվյալ տարվա հունիսի 15-ը:

74. Կենտրոնացված ընդունելության քննությունների անցկացման համար գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի հրամանով մինչև տվյալ տարվա հունիսի 20–ը ստեղծվում են առարկայական քննական հանձնաժողովներ (այսուհետ՝ քննական հանձնաժողով):

75. Քննական հանձնաժողովը կազմված է նախագահից, տեղակալից և անդամներից:

76. Քննական հանձնաժողովը կազմում է քննական տոմսերը, տարբերակները և քննական այլ նյութեր, ստորագրում և ծրարում է քննական տոմսերի բնագրերը, որոնք կնքվում են գնահատման և թեստավորման կենտրոնի կնիքով և մինչև տվյալ քննության օրը պահվում գնահատման և թեստավորման կենտրոնում:

77. Քննության ավարտից հետո քննական հանձնաժողովի նախագահը կազմում ու գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացնում հաշվետվություն, որի պատճենը հանձնում է տվյալ բուհի ընդունող հանձնաժողովին:

78. Կենտրոնացված քննության արձանագրությունը պարտադիր կերպով ստորագրում է քննական հանձնաժողովի նախագահը:

79. Կենտրոնացված բանավոր քննության կազմակերպումը, անցկացումը և գնահատականի բողոքարկումը՝

1) կենտրոնացված բանավոր քննության քննական հանձնաժողովի նախագահը քննության օրը բուհի ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարից ստանում է դիմորդների ցուցակը.

2) դիմորդները քննասենյակ են մտնում դիմորդների ցուցակում իրենց անունների հերթականությանը համապատասխան.

3) ցուցակի, անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, իսկ անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ) և քննական թերթիկի համապատասխանությունն ստուգում են առարկայական հանձնաժողովի նախագահը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը կամ պատասխանատու քարտուղարը.

4) դիմորդների ցուցակում դիմորդն իր անվան դիմաց ստորագրում է, որից հետո քննասենյակում ընտրում քննատոմսը.

5) քննատոմսն ընտրելուց հետո քննասենյակում դիմորդն ստանում է բանավոր հարցման թերթ, որում կարող է գրի առնել իր պատասխանը, լրացուցիչ հարցերը և դրանց պատասխանները.

6) դիմորդի պատասխանը գնահատվում է 20 միավորանոց համակարգով: Անբավարար և 8, 18-20 գնահատականները համաձայնեցվում են առարկայական քննական հանձնաժողովի նախագահի հետ.

7) դիմորդների վիճահարույց աշխատանքները գնահատվում են քննական հանձնաժողովի կողմից՝ քվեարկության միջոցով: Կենտրոնացված բանավոր քննության արձանագրությունը, բացի քննական հանձնաժողովի նախագահից, ստորագրում են ևս երկու քննող դասախոս.

8) կենտրոնացված բանավոր քննության գնահատականը դիմորդին հայտնվում է քննության օրը՝ քննասենյակում: Բանավոր քննության գնահատականը դիմորդն իրավունք ունի բողոքարկելու քննական հանձնաժողովի նախագահին՝ առանց քննասենյակից դուրս գալու.

9) կենտրոնացված բանավոր քննությունները տեսաձայնագրվում են:

80. Կենտրոնացված գրավոր քննության անցկացումը՝

1) հանձնաժողովի նախագահը կենտրոնացված գրավոր քննության օրն ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարից ստանում է դիմորդների ցուցակը.

2) դիմորդների մուտքը կենտրոնացված գրավոր քննության քննական կենտրոն կատարվում է համաձայն դիմորդների ցուցակի.

3) ցուցակի, անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, իսկ անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ) և քննական թերթիկի համապատասխանությունն ստուգում են առարկայական հանձնաժողովի նախագահը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը կամ պատասխանատու քարտուղարը.

4) քննական հանձնաժողովի նախագահն ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի հետ ճշտում է քննությանը ներկայացած դիմորդների թիվը, որից հետո քննական տետրերը բաժանում են դիմորդներին, բացատրում տիտղոսաթերթի լրացման ձևը.

5) քննական տետրերը բաղկացած են տիտղոսաթերթից և 10 թերթից, ծածկագրված են, կնքված գնահատման և թեստավորման կենտրոնի ու ընդունող հանձնաժողովի կողմից.

6) ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն ստուգում է տիտղոսաթերթի ճիշտ լրացումը, կազմում արձանագրություն տիտղոսաթերթերի քանակի մասին: Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը գնահատման և թեստավորման կենտրոնին է հանձնում կնքված տիտղոսաթերթերը, դրանք ապածածկագրվում են, և գրանցված տվյալները մուտքագրվում են բազայում.

7) ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն արձանագրությունը գնահատման և թեստավորման կենտրոնին է հանձնում քննությունից հետո.

8) քննական տարբերակները դրվում են սեղանին, դահլիճից հրավիրվում են դիմորդներ՝ ընտրելու համապատասխան քանակի քննական տարբերակներ: Գործընթացին կարող են ներկա լինել դիմորդների ծնողները.

9) կենտրոնացված գրավոր քննության ամբողջ ընթացքում քննասենյակում պետք է ներկա լինեն քննական հանձնաժողովի նախագահը, տեղակալը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը:

81. Կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքների ստուգումը՝

1) քննության ավարտից հետո դիմորդները քննական տետրերը հանձնում են քննական հանձնաժողովի նախագահին: Պատասխանատու քարտուղարը գրավոր աշխատանքի չլրացված տեղերում նշում է կատարում լատիներեն «զեթ» տառի տեսքով.

2) քննական հանձնաժողովի նախագահը դրանք հանձնում է հանձնաժողովի անդամներին՝ ստուգման.

3) ստուգումն իրականացվում է քննության օրը՝ քննասենյակում.

4) ստուգման ընթացքը վերահսկվում է գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի կողմից.

5) կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքների ստուգումից հետո քննական հանձնաժողովի նախագահի հսկողությամբ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն ստուգում է տետրերում միավորների գումարումը և վերջնական գնահատականի գրանցումը, ապա ծածկագրում տետրերը, կազմում քննական աշխատանքների ծածկագրերի արձանագրությունը երեք օրինակից, որոնց վրա ստորագրում են առարկայական հանձնաժողովի նախագահը, նրա տեղակալները, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը, պատասխանատու քարտուղարը: Արձանագրություններից երկուսը պատասխանատու քարտուղարը քննական տետրերի հետ միասին պահում է իր մոտ, իսկ բնօրինակը հանձնում քննական հանձնաժողովի նախագահին: Նշված գործընթացը վերահսկվում է գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի կողմից.

6) անբավարար, 8, 18-20 գնահատականները համաձայնեցվում են առարկայական քննական հանձնաժողովի նախագահի հետ.

7) առարկայական քննական հանձնաժողովի նախագահի կողմից ստորագրված քննական տետրերի ծածկագրերի արձանագրությունը մուտքագրման համար ներկայացվում է գնահատման և թեստավորման կենտրոն: Համեմատելով տիտղոսաթերթերը և ծածկագրերի արձանագրությունները՝ գնահատման և թեստավորման կենտրոնը կազմում է գնահատականների ցուցակ.

8) գնահատականների ցուցակները կենտրոնացված գրավոր քննության քննական կենտրոնում փակցվում են քննությունը հանձնելու հաջորդ օրը՝ ժամը 16:00-ին:

82. Կենտրոնացված գրավոր քննության գնահատականի բողոքարկումը՝

1) դիմորդը կարող է բողոքարկել իր գնահատականը կենտրոնացված գրավոր քննությունների գնահատականների ցուցակները փակցնելու հաջորդ օրը՝ ժամը 9:00-18:00-ի ընթացքում.

2) բողոքարկման համար դիմորդը դիմում է ներկայացնում պատասխանատու քարտուղարին: Դիմումների ընդունման ժամկետի ավարտից հետո պատասխանատու քարտուղարը դիմումները հանձնում է քննական հանձնաժողովի նախագահին.

3) դիմումում նշվում է կենտրոնացված գրավոր քննական աշխատանքի այն հատվածը, որի գնահատման հետ դիմորդը համաձայն չէ.

4) բողոքարկման ժամանակ հանձնաժողովը վերանայում է միայն դիմորդի կողմից նշված հատվածը (հատվածները): Մյուս հատվածների վերանայումը և վերագնահատումը չի թույլատրվում.

5) քննական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի՝ բողոքարկված կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքն ստուգած անդամը քննարկում են կենտրոնացված գրավոր քննական աշխատանքի բողոքարկված հատվածը՝ դիմորդի և նրա կողմից հրավիրված մասնագետի հետ.

6) բողոքարկված կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքի գնահատականը կարող է բարձրացվել, իջեցվել կամ չփոփոխվել.

7) բողոքարկման արդյունքները լրացվում են գնահատման էջի համապատասխան մասում, պարտադիր գրախոսվում քննական հանձնաժողովի նախագահի կողմից և հանձնվում պատասխանատու քարտուղարին.

8) կենտրոնացված գրավոր քննական աշխատանքի գնահատականի փոփոխման դեպքում գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացվում քննական հանձնաժողովի նախագահի արձանագրությունը.

9) կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքի բողոքարկման արդյունքը ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, հրապարակվում է կենտրոնացված գրավոր քննության քննական կենտրոնում.

10) կենտրոնացված գրավոր քննության բողոքարկված քննական աշխատանքի վերագնահատման հետ անհամաձայնության դեպքում բողոքարկման արդյունքի հրապարակման հաջորդ օրը՝ ժամը 9:00-18:00-ի ընթացքում, դիմորդը կարող է դիմել գնահատման և թեստավորման կենտրոնի բողոքարկման հանձնաժողովին.

11) գնահատման և թեստավորման կենտրոնի բողոքարկման հանձնաժողովի կողմից հրավիրված փորձագետը, որը պետք է ունենա տվյալ առարկայից առնվազն հինգ տարվա մանկավարժական գործունեության փորձ և համապատասխան մասնագիտության գիտական աստիճան, ներկայացնում է եզրակացություն, որի հիման վրա բողոքարկման հանձնաժողովը մեկօրյա ժամկետում ընդունում է վերջնական որոշում գնահատականը բարձրացնելու, իջեցնելու կամ նույնը թողնելու մասին.

12) սույն կետի 11-րդ ենթակետով նախատեսված բողոքարկման ընթացքում վերանայվում է կենտրոնացված գրավոր աշխատանքի միայն բողոքարկված մասը.

13) գնահատականի փոփոխման դեպքում բողոքարկման հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ համապատասխան արձանագրություն է ներկայացվում գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենին:

X. ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

83. Ներբուհական ընդունելության քննություններն անցկացվում են տվյալ տարվա հունիսի 24-ից հուլիսի 8 -ն ընկած ժամանակահատվածում:

(83-րդ կետը փոփ. 25.04.2013 N220-Ն)

84. Ներբուհական ընդունելության քննությունները կազմակերպվում են սույն կարգի 73-78-րդ կետերի պահանջներին համապատասխան՝

1) ներբուհական ընդունելության քննություններն անցկացվում են տվյալ մասնագիտության մասնագիտական առարկաների առանձնահատկություններին և ծրագրերի պահանջներին համապատասխան.

2) ներբուհական ընդունելության քննությունների արդյունքների բողոքարկումն անցկացվում է սույն կարգի 79-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջներին համա-պատասխան՝ բացառությամբ «Գծանկար», «Գծագրություն», «Գունանկար», «Նկարչություն» առարկաների քննությունների արդյունքների բողոքարկման, որոնց քննությունների արդյունքների բողոքարկումն անցկացվում է սույն կարգի 82-րդ կետի պահանջներին համապատասխան:

XI. ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՉՆԵՐԿԱՅԱՑԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

85. Հարգելի պատճառով ներբուհական քննությանը չներկայացած դիմորդներին թույլատրվում է հանձնել լրացուցիչ քննություն՝ քննացուցակով այդ առարկայից սահմանված քննության օրերին. քննացուցակով տվյալ առարկայից քննություն չլինելու դեպքում դիմորդը դուրս է մնում:

XII. ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

86. Ընդունելության քննությունները գնահատվում են 20 միավորային համակարգով: Միասնական քննություններում դրական են համարվում 7.5 և բարձր միավորները: Բոլոր միավորները գնահատվում են հարյուրերոր-

ԿԱՐԳ

դական մասի պահպանմամբ՝ տվյալ առարկայի գնահատման չափանիշներով սահմանված քայլերին համապատասխան:

Կենտրոնացված և ներբուհական քննություններում դրական են համարվում ութ և բարձր միավորները :

87. «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաների միասնական քննությունների գնահատականները համարժեքացվում են 20 միավորային համակարգին:

88. Դիմորդն անվճար և վճարովի ուսուցմամբ հայտագրած համապատասխան մասնագիտությունների մրցույթներին մասնակցում է մրցութային քննություններից ստացած դրական միավորների գումարով՝ հարյուրերորդական մասի պահպանմամբ: Այն մասնագիտությունների համար, որոնք ընդունելության քննությունների ցանկում նշված են որպես ոչ մրցութային, դիմորդը մրցույթին մասնակցում է այդ առարկաներից դրական միավոր ստանալու դեպքում:

89. Մասնագիտությունների մրցույթն անցկացվում է մասնագիտությունների համապատասխան ուղղվածությամբ՝ ըստ մասնագիտությունների, մասնագիտությունների խմբերի, ֆակուլտետների (դեպարտամենտների):

90. Անվճար և վճարովի ուսուցման ընդունելության մրցույթներն անցկացվում են մեկ փուլով:

91. Մասնագիտությունների մրցույթն անցկացվում է անվճար ուսուցման առաջին տողով հայտագրված մասնագիտության գերակայությամբ:

(91-րդ կետը լրաց.13.05.2014 N297-Ն)

92. Առաջին հայտագրված մասնագիտության մրցույթով չանցած դիմորդների համար անվճար և վճարովի ուսուցման մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտում հայտագրված մասնագիտությունների հերթականությանը համապատասխան:

93. Ընդունելության դիմում-հայտում հայտագրված որևէ մասնագիտությամբ (ըստ հայտագրման հերթականության) ընդունված դիմորդը չի մասնակցում հայտագրված հաջորդ մասնագիտությունների մրցույթին:

93.1. Արցախի պետական համալսարանի և «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի «?»--------- նշանով նշված մասնագիտությունների անվճար ուսուցման համակարգի մրցույթին կարող են մասնակցել նաև այն դիմորդները, ովքեր մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել են միջնակարգ կրթության ատեստատի կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի՝ պետական ավարտական քննությունների գնահատականները, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը: Անվճար համակարգում առաջնահերթ ընդունվելու արտոնությունից օգտվում են այն դիմորդները, ովքեր մրցութային երկու առարկաներից հանձնում են միասնական քննություն:

(93.1-րդ կետը լրաց.13.05.2014 N297-Ն)

94. Անվճար տեղերի մրցույթին դիմորդները կարող են մասնակցել միայն ընդունելության քննությունների արդյունքներով՝ բացառությամբ Արցախի պետական համալսարանի և «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի «?»------- նշանով նշված մասնագիտությունների: Վճարովի տեղերի մրցույթին դիմորդները կարող են մասնակցել և՛ միասնական քննությունների արդյունքներով, և՛ բուհերի ընդունելության քննությունների ցանկում 2 աստղանիշով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական ընդունելության դիմում-հայտում հայտագրած միջնակարգ կրթության ատեստատի կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի՝ պետական ավարտական քննությունների գնահատականներով, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականով՝ բացառությամբ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի ------«?» նշանով նշված մասնագիտությունների, որոնց դիմորդները, որպես մրցութային առարկաների գնահատական, կարող են դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը: Վճարովի տեղերի մրցույթում առաջնահերթությունը տրվում է առավել թվով միասնական քննություններ հանձնած դիմորդներին:

(94-րդ կետը խմբ.13.05.2014 N297-Ն)

95. Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի առկա ուսուցման մասնագիտությունների նպատակային ընդունելության անվճար ուսուցման տեղերում՝ հաստատված նախարարի հրամանով և համաձայնեցված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հետ, կարող են ընդունվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների՝ գյուղատնտեսական մասնագետների խիստ կարիք ունեցող գյուղական վայրերի՝ տվյալ բնակավայրում գրանցում ունեցող դիմորդները՝ դպրոցների մանկավարժական խորհուրդների և շրջանների վարչակազմերի կրթության բաժինների կողմից տրված երաշխավորագրով:

Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված նպատակային անվճար տեղերում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում կարող են ընդունվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գրանցում ունեցող և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատություններն ավարտած դիմորդները:

Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի ընդունելության նպատակային անվճար տեղերի և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված նպատակային անվճար տեղերի դիմորդների և նրանց ծնողների հետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը՝ ի դեմս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճյուղային նախարարների, կնքում է պայմանագիր՝ բուհն ավարտելուց հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մասնագիտությամբ աշխատելու վերաբերյալ:

96. Մրցութային հավասար միավորների դեպքում, ըստ հերթականության, առավելություն է տրվում՝

1) բոլոր տարիների մեդալակիր դիմորդներին.

2) արվեստի գծով միջազգային և հանրապետական մրցույթների հաղթողներին.

3) դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդներին.

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուհերի առկա ուսուցմամբ տվյալ ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկում բուհի կողմից նշված առաջին մրցութային քննությունից առավել բարձր միավոր ստացած դիմորդներին.

5) դպրոցի պետական ավարտական քննություններից առավելագույն միջին գնահատական ունեցող դիմորդներին.

6) տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին:

97. Բուհերի այն մասնագիտությունների գծով, որոնց քննությունների անվանացանկում առարկաները նշված են մեկ (նաև անվճար ուսուցման մրցույթին մասնակցելու համար) և երկու աստղանիշով, վճարովի ուսուցման թափուր տեղերի մրցույթին մասնակցելու համար՝

1) մրցութային և ոչ մրցութային քննությունների գնահատականներ են համարվում միջնակարգ կրթության ատեստատի, միջին մասնագիտական (հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության հիմքով) կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների ավարտական փաստաթղթերի տվյալ առարկաների պետական ավարտական քննական գնահատականները, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը,

2) 10 միավորային համակարգով տարեկան գնահատականները համապա-տասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին՝

ա. «4»-ը, «5»-ը և «6»-ը համարժեք են 13 միավորի,

բ. «7»-ը և «8»-ը համարժեք են 17 միավորի,

գ. «9»-ը և «10»-ը համարժեք են 20 միավորի,

3) միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի 5 միավորային համակարգով գնահատված տարեկան քննական գնահատականները համապատասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին՝

ա. «3»-ը համարժեք է 13 միավորի,

բ. «4»-ը համարժեք է 17 միավորի,

գ. «5»-ը համարժեք է 20 միավորի.

98. Քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին մրցույթից դուրս ընդունվում են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունների, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանությունների և Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունների կողմից տված տեղեկանքների:

99. Վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում անվճար ուսուցման համակարգ են ընդունվում՝

1) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները.

2) առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:

(99-րդ կետը խմբ.13.05.2014 N297-Ն)

100. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները զորացրվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում՝

1) անվճար ուսուցմամբ ընդունվում են ընդհանուր մրցույթից դուրս (առանձին մրցույթով)՝ ըստ մասնագիտությունների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեղերի.

2) անվճար ուսուցման մրցույթից դուրս մնալու դեպքում դիմորդները վճարովի ուսուցման մրցույթին մասնակցում են ընդհանուր հիմունքներով.

3) եթե հայտագրել են միայն վճարովի ուսուցման տեղեր հատկացված մասնագիտություններ՝ բուհ են ընդունվում մրցույթից դուրս:

101. Առանց ընդունելության քննության Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հատկացված պահուստային տեղերի հաշվին բուհ են ընդունվում միջնակարգ դպրոցի հանրակրթական առարկաների գծով միջազգային օլիմպիադաների հաղթողները, տարբեր մարզաձևերի գծով աշխարհի և Եվրոպայի առաջնությունների մրցանակակիրները, ովքեր ընդունելության դիմում-հայտում հայտագրել են համապատասխան մասնագիտությունները:

102. Անվճար և վճարովի ուսուցման մրցույթների արդյունքներն ամփոփվում են մինչև տվյալ տարվա հուլիսի 15-ը:

103. Ներբուհական քննությունների արդյունքներով մրցույթն անցկացվում է համապատասխան բուհում: Մրցույթի արդյունքը հաստատվում է հանրապետական ընդունող հանձնաժողովում, որից հետո բուհի ռեկտորը հրամանագրում է ուսանողներին:

104. Հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից ընդունելության քննությունների մրցույթի արդյունքները հաստատելուց հետո, բուհերում թափուր տեղերի առկայության դեպքում, ընդունելության քննություններից դրական միավոր (ներ) ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները հուլիսի 15-20-ն ընկած ժամանակահատվածում կարող են մասնակցել թափուր տեղերի մրցույթին՝ թափուր տեղեր ունեցող բուհում լրացնելով նոր դիմում-հայտ:

105. Բուհի պատասխանատու քարտուղարը հուլիսի 21-ին գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացնում թափուր տեղերի մրցույթի դիմում-հայտերը:

106. Հանրապետական ընդունող հանձնաժողովը բուհերում թափուր տեղերի մրցույթի արդյունքները հաստատում է հուլիսի 25-ին:

XIII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

107. Ընդունելության քննությունների հանրապետական ընդունող հանձնաժողովը կազմված է 12 անդամից: Հանրապետական ընդունող հանձնաժողովի նախագահը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարն է: Հանրապետական ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի աշխատակազմի ներկայացուցիչը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ներկայացուցիչը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչը, գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը, բուհերի ռեկտորները և պատասխանատու քարտուղարը: Հանրապետական ընդունող հանձնաժողովի կազմը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթությանև գիտության նախարարը:

108. Հանրապետական ընդունող հանձնաժողովի որոշմամբ՝

1) հաստատվում են անվճար և վճարովի ուսուցման համակարգի մրցույթների արդյունքները.

2) հաստատվում են սույն կարգի 98-101-րդ կետերին համապատասխան արտոնություններից օգտվող դիմորդների ընդունելության արդյունքները.

3) վերաբաշխվում են մրցույթի արդյունքներով անվճար, վճարովի ուսուցման համակարգում թափուր մնացած տեղերը, ինչպես նաև անվճար, վճարովի համակարգի պահուստային տեղերը:

ԸՆԹԱՑՔ

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՇԱԿԵՐՏ-2014»

Մայիսի 15-ին Ստեփանակերտի քաղաքային մշակույթի տան դահլիճում կայացավ «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթի հանրապետական փուլը: Մրցույթի նպատակն աշակերտների շրջանում կրթության դերի ու նշանակության ամրապնդումն է: Այն նպաստում է սովորողների մոտ ինտելեկտուալ գործունեության հանդեպ հետաքրքրությունների և գեղագիտական ճաշակի ձևավորմանը, խթանում ճանաչողական ակտիվությունը և ստեղծագործական գործունեությունը:

Հանրապետական փուլին մասնակցելու էին եկել շրջանային (քաղաքային) փուլում հաղթող ճանաչված հինգ աշակերտուհիներ՝ Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Լուսինե Մարտիրոսյանը, Մարտունու շրջանի Ճարտարի հ. 1 հոսքային դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Ժենյա Հարությունյանը, Մարտակերտի շրջանի Առաջածորի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Մերի Բեկնազարյանը, Հադրութի շրջանի Մարիամածորի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Հերմինե Արզումանյանը և Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Լիլիթ Ավանեսյանը:

Մրցույթն ընթացավ երեք փուլով, որոնք կրում էին «Ինտելեկտուալ մարաթոն», «Շոու-ծրագիր» և «Դե՝ մտածիր» խորագրերը:

Առաջին փուլում յուրաքանչյուր աշակերտի տրվեց 10 հարցից բաղկացած թերթիկ, որն աշակերտները լրացրին 10 րոպեի ընթացքում: Բոլոր մասնակիցներին տրվեցին նույն հարցերը դպրոցական ծրագրի շրջանակներում:

Բոլորը ցուցաբերեցին որոշակի գիտելիքներ, սակայն Մարտունու շրջանի Ճարտարի հ. 1 հոսքային դպրոցի աշակերտուհի Ժենյա Հարությունյանն առանձնացավ փայլուն գիտելիքներով՝ պատասխանելով տարբեր առարկաներից առաջադրված հարցերին:

«Դե՝ մտածիր» խորագրով մրցույթում իր ճարպկությամբ ու արագ կողմնորոշվելու ունակությամբ աչքի ընկավ Առաջածորի միջնակարգ դպրոցի աշակերտուհի Մերի Բեկնազարյանը:

«Շոու-ծրագրին» բոլոր թիմերը լավ էին նախապատրաստվել, սակայն աչքի ընկավ Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի թիմը: Հանդիսատեսը հիացած էր Լուսինե Մարտիրոսյանի անաղարտ հայերենով հաղորդակցվելու ունակությամբ, ստեղծագործական առանձնահատկություններով, հասուն մտքի թռիչքով:

Հադրութի թիմը ներկայացնող Հերմինե Արզումանյանը աչքի ընկավ նկարելու առանձնահատուկ կարողությամբ, փայտի փորագրման, ասեղնագործության և հելուճագործության գեղեցիկ աշխատանքներով: Իսկ շուշեցի Լիլիթ Ավանեսյանը հանդիսատեսին հիացրեց իր գեղեցիկ արվեստով:

Մրցույթի երեք փուլերի արդյունքների ամփոփումից լավագույն աշակերտ ճանաչվեց Ժենյա Հարությունյանը, 2-րդ տեղում էր Մերի Բեկնազարյանը, 3-րդ հորիզոնականը զբաղեցրեց Լուսինե Մարտիրոսյանը:

Մրցույթին մասնակցած բոլոր հինգ աշակերտները պարգևատրվեցին ԿԳ նախարարության հուշանվերներով, իսկ մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտուհիները՝ նախարարության պատվոգրերով և դրամական պարգևներով:

Միջոցառումը համեմվեց մշակույթի քաղաքային տան սան Աննա Մկրտչյանի «Արցախում» երգի կատարմամբ, և «Կիարա» պարի խմբի ներկայացրած պարերով (գեղ. ղեկավար՝ Մարինա Վարունց):

Միջոցառումից հեռացնանք բարձր տրամադրությամբ և լավ տպավորություններով:

Ռ. ԲԱՋԻՅԱՆ

«ԳԻՏՈՒՆԻԿ»-ՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԸ

Ստեփանակերտի մշակույթի քաղաքային տան հարկի տակ մայիսի 16-ին հավաքվել էին հանրապետության պատանի «գիտունիկները»՝ համանուն ինտելեկտուալ խաղ-մրցույթի հանրապետական փուլի մասնակիցները Ստեփանակերտ քաղաքից և բոլոր շրջաններից: ԼՂՀ կրթության և գիտության նախարարության արտադպրոցական և նախադպրոցական բաժնի կողմից անցկացվող ամենամյա այս մրցույթի կանոններն ու կարգը նույնն են՝ առաջին փուլում 15, երկրորդ փուլում՝ տաս հարց: Անկախ հավաքած միավորներից թիմերն անցնում են երկրորդ փուլ, այսինքն՝ թիմին հնարավորություն է տրված մինչև վերջ պայքարել հաղթանակի համար: Հարցերը բարդ չէին, հատկապես՝ առաջին փուլի: Տրված ժամանակն էլ (յուրաքանչյուր հարցի՝ մեկ րոպե) բավարար էր կենտրոնանալու, թիմակիցների հետ խորհրդակցելու և ճիշտ պատասխաններ տալու: Առաջին փուլում թիմերի հավաքած միավորների տարբերությունն այնքան էլ մեծ չէր: Ամենաշատ միավորներ հավաքեց Ստեփանակերտի թիմը՝ 24 միավոր (առավելագույն 30 միավորից), երկրորդ տեղում՝ 21 միավորով Ասկերանի և Քաշաթաղի թիմերն էին, երրորդ հորիզոնականում՝ Հադրութի թիմը՝ 19,5 միավորով: Առաջատարի դիրքը Ստեփանակերտը պահպանեց նաև երկրորդ փուլում՝ հավաքելով ամենաշատ միավորները՝ 7,5 (հնարավոր 20 միավորից), Քաշաթաղը և Հադրութը իրենց տեղը զիջեցին Ասկերանի և Մարտակերտի թիմերին: Այսպիսով՝ 31,5 միավորով հաղթող ճանաչվեց Ստեփանակերտի թիմը, որը ներկայացնում էր Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցը, երկրորդ տեղում Ասկերանի թիմն էր՝ շրջկենտրոնի է. Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցը, (28,5միավոր), երրորդ տեղում Մարտակերտի թիմն էր՝ Վլ. Բալայանի անվան հ. 1 հոսքային միջնակարգ դպրոցը (25,5միավոր): Մրցանակային տեղեր գրաված թիմերը պարգևատրվեցին ԿԳ նախարարության դիպլոմներով և դրամական պարգևով:

Մրցույթին ներկա էր ԿԳ փոխնախարար Միքայել Համբարձումյանը: Շնորհավորելով հաղթողներին՝ նա հետևյալ դիտողությունն

արեց. առանձնապես երկրորդ փուլում մասնակիցներն ակտիվ չէին, որովհետև հարցերը պահանջում էին տրամաբանական մտածողություն, ինչը խոսում է այն մասին, որ նրանք տեխնիկական առարկաների նկատմամբ առանձնակի հակում չունեն:

Իր դիտարկումները ներկայացրեց նաև ԿԳ վարչության պետ Ռայա Մուսայելյանը:

Մրցույթը վարեց մշակույթի տան աշխատող Նելլի Դանիելյանը: Մշակույթի այս օջախի սաները մրցույթի ընթացքում ցուցադրեցին իրենց արվեստը: Ներկա էր նաև Մարտունու շրջանի Բերդաշենի մշակույթի տան տնօրեն, բանաստեղծուհի Ջոյա Հովհաննիսյանը, ով խրախուսեց ինտելեկտուալ խաղերի նկատմամբ երեխաների հակումը և նման մրցույթների կազմակերպումը, որը շարժում է երեխաների միտքը, ձևավորում նոր գիտելիքներ: Իսկ գիտելիքներն օգնում են մարդուն ազատ լինելու:

ԿԳՆ արտադպրոցական և նախադպրոցական բաժնի պետ Աննա Այվազյանը ներկայացրեց Ջ. Հովհաննիսյանին, ով լինելով զոհված ազատամարտիկի մայր, 1994թ. մասնակցեց թատերական փառատոնին՝ իր իսկ գրած պիեսով և ինքն էլ հանդես եկավ սգավոր մոր կերպարով՝ ցույց տալով, թե կամքի ինչ ուժ ունեն Արցախի մայրերը: Ներկաները հուսավառվեցին նաև նրա՝ Շուշիի ազատագրման մասնակիցներին նվիրված իր երգի կատարմամբ:

Ինտելեկտուալ խաղն առիթ էր նոր ծանոթությունների հաստատման, նոր գիտելիքների ստացման համար:

Սեփ լրատվություն

ԿԵՆԴԱՆԻ Է ՈԳԻՆ՝ ԿԵՆԴԱՆԻ Է ԱԶԳԸ

Օրերս Մարտակերտի հ. 2 հիմնական դպրոցի առաջին դասարանցիները սովորական օրը տոն դարձրին: Միջոցառումը կրում էր «Մնա՞ս բարով, Այբբենարա՛ն, բարի՛ գալուստ, Մայրենի» խորագիրը: Դասվար Ուլյանա Ավքանդիլյանը, բացեց միջոցառումը՝ կարևորելով մայրենի լեզվի դերը. «Այսօր մեզ համար տոն է, զորակոչ Լույսի, Ոգու, Ապագայի»:

Բեմադրության ընթացքում Թզուկը հրավիրատոմսեր բաժանեց անտառի բնակիչներին՝ ներկա գտնվելու Այբբենարանի տոնին: Բոլորը շտապեցին մասնակցելու երգ ու պարով, ասմունքով համեմված միջոցառմանը: Սակայն հիվանդացել էր Մայրենին: Անգամ շտապօգնության հասած բժշկին չհաջողվեց բուժել հիվանդին: Օգնության հասավ բարի փերին, որը բացահայտեց համաճարակը կանխելու ճանապարհը: «Երբ դուք օգտագործում եք բառի սխալ ձևը, հիվանդությունը հզորանում է, ուժեղանում, և խեղճ բառը մոռանում է իր իսկական անունը, իսկ երբ օգտագործում եք բառի ճիշտ ձևը, վարակը հետզհետե թուլանում է և ի վերջո անհետանում: Հիշե՛ք, որ մեր մայրենի լեզուն պահողն ու պահպանողը դուք եք, սիրելի՛ երեխաներ»: Աշակերտները խոստացան հավատարիմ լինել իրենց երդմանը՝ անաղարտ պահել մայրենին:

- Հիշե՛ք, հայորդինե՛ր, լեզուն ազգի ոգին է. կենդանի է ոգին՝ կենդանի է ազգը,- պատգամեց բեմադրության գլխավոր հերոս Մեսրոպ Մաշտոցը:

Միջոցառման ավարտին դպրոցի տնօրեն Մելսիդա Քարդումյանը շնորհակալություն հայտնեց դասվար Ու. Ավքանդիլյանին և երեխաներին՝ հրաշալի միջոցառման համար:

Բելա ՍԱՀԱԿՅԱՆ

ՄԱՅԻՍՅԱՆ ԵՌԱՏՈՆԸ ՏՈՆԵՑԻՆ ՆԱԵՎ ՄԵՐ ՓՈՔ-

Մայիսի 6-ին Մարտունու Մոնթե Մելքոնյանի անվան մանկապարտեզում արտասովոր օր էր՝ լի տոնական տրամադրությամբ: Գեղեցիկ ձևավորված դահլիճում ավագ խմբի սանիկների մասնակցությամբ կազմակերպվեց հանդես, որին երեխաների ծնողներից ու մանկապարտեզի սաներից բացի մասնակցում էին Արցախյան պատերազմում լուրջ ներդրում ունեցած ազատամարտիկներ. ԼՂՀ ՊԲ պահեստազորի գեներալ, այսօր Մարտունու շրջվարչակազմի ղեկավար Ն. Սողոմոնյանը, զինկոմ Գ. Պետրոսյանը, ԼՂՀ ՊԲ 2-րդ պաշտպանական շրջանի հրամանատար Գ. Գաբրիելյանը, 3-րդ պաշտպանական շրջանի հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ, փոխգնդապետ Մ. Սարգսյանը, շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Ջ. Ղուլյանը:

Երեխաները զինվորական համազգեստով, եռագույնը հպարտորեն վեր պահած, «Հայ զինվոր» երաժշտության ներքո մտան դահլիճ, ողջունեցին միջոցառման մասնակիցներին և շնորհավորեցին նրանց եռատոնը: Կազմելով կիսաշրջան՝ փոքրիկ զինվորականները զինավարժություններ կատարեցին: Հանդեսը բացեց ավագ խմբի դաստիարակ Ի. Աբրահամյանը, ով շնորհավորելով բոլորի եռատոնը՝ մաղթեց հարատև խաղաղություն մեր Արցախին: «Մենք էլ չենք ուզում կռիվ և արյուն. չենք ուզում մարդիկ իրար հետ խոսեն զենքով, զրահով, թող միայն խոսեն մարդկային լեզվով, հարցերը լուծեն միայն գրիչով»,- նշեց դաստիարակը:

Հանդեսը համեմվեց օրվա խորհուրդը նշանավորող ռազմահայրենասիրական խրոխտ երգերով, հաղթական պարերով ու արտասանություններով, որոնցում գովերգվեց երեկվա ազատամարտիկը, այսօրվա

հայրենիքի անվտանգությունը պահող հայ զինվորը, նրան դեպի ճիշտն ուղղորդող հրամանատարը: Այստեղ երեխաներն արտահայտեցին այն գաղափարը, որ իրենք հզոր հայրենիքի փոքրիկ, բայց խելացի ու ճարպիկ զինվորն են և լեռան պես անառիկ կպահեն հայրենիքը, խոստացան լինել մեր քաջ հայորդիների արժանի փոխարինողներ: Երեխաները, հիրավի, քաջ գիտակցում էին տոնական օրվա խորհուրդը: Գիտեին, որ ամբողջ աշխարհը մայիսի 9-ին տոնում է ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը, Շուշիի փառավոր ազատագրման և Հայոց բանակի ստեղծման օրը. բանակ, որ ծնվեց մարտերի բովում, երբ թնդանոթը մեր հողն էր խոցում ու Արցախ աշխարհը տնքում էր թշնամու զարկից: «Հզոր է այն ազգը, որ հարուստ է ոչ թե թնդանոթներով, այլ հայրենասեր երեխաներով ու հերոս մայրերով»,- նշեց Ի. Աբրահամյանը՝ հանդեսն ավարտելով ոգեկոչող բանաստեղծությամբ, որի վերջին տողերում ասվում էր. «Ղարաբաղցի, քո երկիրն անհաղթ է, մանուկներիդ երգն ու պարն անխախտ է»:

Միջոցառման վերջում հյուրերը հաճելի անակնկալներ մատուցեցին փոքրիկներին՝ նրանց համար բերելով բազմաթիվ արժեքավոր նվերներ:

Շրջվարչակազմի ղեկավար Ն. Սողոմոնյանը հուզումնալից հպարտությամբ ու մեծ խանդավառությամբ խոսեց օրվա ուրախության, ըմբոշխնած գեղագիտական հաճույքի մասին, շնորհավորեց փոքրիկների և ողջ հայության ՀԱՂԹԱՆԱԿԻ տոնը՝ մաղթելով նորանոր հաղթանակներ:

Մանկապարտեզի մեթոդիստ Ի. Ուլուբաբյանը, ուսումնադաստիարակչական աշխատանքներում կարևորելով զանազան ժամանցներն ու տոնահանդեսները, նշեց, որ դրանք ունեն կարևոր նպատակ՝ խորը ճանաչել մարդասիրական արժեքները, մեր ազգային ավանդույթներն ու սովորությունները և, ամենակարևորը՝ գնահատել, պահել ու պահպանել մեր հավատքն ու մեր լեզուն, որը մեկ բառով կոչվում է հայրենասիրություն:

Տնօրեն Ի. Ղուկասյանը շնորհակալություն հայտնեց հյուրերին՝ փոքրիկների ուրախությունը կիսելու համար: Փոքրիկներին բացատրեց, թե ինչ դերակատարություն ունեցան նրանք Արցախյան պատերազմում: Ընդգծեց, որ նրանց կատարածն օրինակելի դաս կհանդիսանա մեր երեխաների համար: Շնորհավորելով բոլորի եռատոնը՝ մաղթեց ազատ ու անկախ Արցախ, խաղաղություն, առողջություն և հաջողություններ կյանքի բոլոր բնագավառներում:

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՓՈՐՁ

ՀՈՎԱՐԴ ԳԱՐԴՆԵՐԻ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հ. Գարդների բազմաբնույթ մտածողության տեսության հիմնադրույթն այն է, որ բոլոր մարդիկ ի ծնե օժտված են, և որ մարդկանց հատուկ են ընկալման, մտածողության բոլոր ձևերը, սակայն տարբեր մարդկանց մոտ դրանցից մեկը կամ մի քանիսը լինում են առավել ընդգծված:

Մարդուն հատուկ մտածողության այս տեսակների վրա հիմնվելը ուսուցումը դարձնում է ավելի արդյունավետ, քանի որ ոչ թե աշակերտն է հարմարվում ուսուցման այս կամ այն ձևին, այլ ուսուցման ձևն է հարմարեցվում աշակերտի ընկալմանը:

Գարդներն առանձնացնում է մարդու մտածողության-ընկալման յոթ հիմնական տեսակներ.

1. ***լեզվական-խոսքային մտածողությունը*** ենթադրում է խոսքը, լեզուն՝ որպես մտածողության և հաղորդակցման միջոց օգտագործելու կարողություն,

2. ***տեսողական-տարածական մտածողությունը*** ենթադրում է տրամաբանական, վերլուծական մտածողության, իրերի և գաղափարների միջև կապերն ու օրինաչափություններն ընկալելու կարողություն,

3. ***երաժշտական մտածողությունը*** ենթադրում է երաժշտության, ռիթմի, մեղեդու, հարմոնիայի, չափի, ինչպես նաև շրջակա միջավայրի ձայներն ընկալելու և գաղափարներն ու երևույթները դրանց միջոցով արտահայտելու կարողություն,

4. ***մարմնաշարժողական մտածողությունը*** ենթադրում է մարմնի, շարժումների միջոցով գաղափարներն ու երևույթներն ընկալելու և արտահայտելու կարողություն,

5. ***միջանձնային մտածողությունը*** ենթադրում է ուրիշ մարդկանց հետ արդյունավետ շփման ու համագործակցության, ինչպես նաև փաստերը, գաղափարներն ու երևույթները ուրիշների հետ քննարկելու ճանապարհով ընկալելու և արտահայտելու կարողություն,

6. ***ներանձնային մտածողությունը*** ենթադրում է ինքնաճանաչման կարողություններ՝ ներառյալ սեփական մտորումները, վարքի դրդապատճառները, նպատակները, զգացմունքներն ու գաղափարները և դրանց հիման վրա նոր մտքեր կառուցելու, նոր գաղափարներ զարգացնելու կարողություն:

Այսպիսով, բազմաբնույթ մտածողության (ԲՄ) տեսությունը կարելի է ընկալել որպես մարդու հնարավորություններն ի մի բերող. նրա անհատականությունն ամբողջացնող և ակտիվացնող մի տեսություն, որի կիրառումն ուսուցման գործընթացում նպաստում է սովորողների բոլոր հնարավորությունների բացահայտմանն ու զարգացմանը:

Բոլոր տարիքի սովորողները ուսման և տեղեկությունների մշակման ընթացքում ուսման եղանակների տարբեր համադրություններ են օգտագործում: Այս եղանակները ***(լսողությունը, տեսողությունը, շոշափումը, գործողությունը)*** օգնում են մեզ անծանոթ առաջադրանքները կատարելու հարցում: Լսողությամբ սովորողները սովորում են ուրիշներից բանավոր ցուցումներ ստանալու, մտքում կամ բարձրաձայն ընթերցելու, դասախոսությունների, քննարկումների, բանավոր զեկույցների, ելույթների, երաժշտության, արտասանության միջոցով: Նրանք կարողանում են մտապահել լսածի միջոցով և սովորաբար հակված են բանավոր արտահայտմանը, կարողանում են հեշտությամբ անգիր անել:

Տեսողությամբ սովորողները սովորում են տեսնելով, դիտելով, զննելով և լավ են հիշում տեսողական մանրամասները: Նկարները, պատկերները, գույներն օգնում են այս աշակերտներին մտապահել տեղեկությունները:

Շոշափելու և շարժումների միջոցով սովորող աշակերտները սովորում են գործողությունների, շոշափելու և անմիջական ներգրավման միջոցով: Նրանք գործնական սովորող են, որոնք պետք է ֆիզիկապես ներգրավվեն նախագծերի և գործողությունների մեջ: Բարդ գործողություններ կատարելու ձեռքի շարժումներն ու շոշափելի առարկաները ուսման միայն մի մասն են կազմում: Սովորողներին անհրաժեշտ է մասնակցել ուսումնական գործողությունների, փորձառությունների և բեմադրությունների մեջ:

Տեղյակ լինելով այս եղանակներին, կփորձենք ***է-ե*** ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը ներկայացնել Հովարդ Գարդների բազմաբնույթ մտածողության տեսության դրույթների կիրառմամբ:

Դասը՝ է-ե ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը.

Դասի տեսակը՝ հաղորդման, հարցման ու ամրակայման դաս (երկու դասաժամ).

Դասի նպատակները՝

ա) աշակերտին տալ հասկացողություն ուղղագրության վերաբերյալ.

բ) ստեղծել ուղղագրական գիտելիքների հիմնավոր պաշար.

գ) սովորողների մեջ զարգացնել ինքնուրույն մտածելու և եզրահանգումներ անելու կարողություններ.

դ) հարստացնել բառապաշարը և զարգացնել գրավոր ու բանավոր խոսք կառուցելու կարողություններ.

Դասին անհրաժեշտ է օգտագործել զննական պարագաներ՝

է-ե ձայնավորների ուղղագրությանը վերաբերող աղյուսակներ, պաստառներ, ցուցանակներ՝ խմբերին անվանումներ տալու համար, վահանակներ, գծապատկերներ, հնարավորության դեպքում՝ պրոյեկտոր.

Դասը կազմակերպում ենք ԽԻԿ համակարգի սկզբունքով:

1. ***Խթանում (կամ նախապատրաստական զրույց):*** Սա մտածողության խթանման այնպիսի ընթացք է, որի ժամանակ աշակերտները ներգրավված են ուսումնական գործունեության մեջ դեռևս ուսումնական նյութը սովորելուց առաջ:

2. ***Իմաստի ընկալում (կամ նոր դասի հաղորդում):*** Մտածողության ընթացք է, որտեղ աշակերտները ներգրավված են սովորելու գործընթացի մեջ:

3. ***Կշռադատում (կամ ամփոփում):*** Այս փուլում իրականացվող մտածողության ընթացքին աշակերտները ներգրավվում են նյութը սովորելուց՝ յուրացնելուց հետո:

Խթանման փուլում կարելի է սովորողներին առաջարկել, որ տեսակետներ հայտնեն, թե ինչի մասին է կամ ինչ է պատմվելու տվյալ վերնագրի տակ: Քանի որ կրտսեր դպրոցից սովորողներն արդեն գիտեն հնչյունի բնորոշումը, դասակարգումը, մանավանդ՝ ձայնավորներն՝ ըստ իրենց արտասանության. ա՜, օ՜, է՜, ը՜, ի՜, ո՜ւ (երաժշտական մտածողություն), ուստի դասն սկսում ենք զրույցի մեթոդով: Ուզում ենք պարզել, թե սովորողներն ինչ են հիշում ***է-ե*** ձայնավորների ուղղագրության վերաբերյալ:

Աշակերտները գրատախտակին գրում են ***է-ե*** ձայնավորների ուղղագրությանը վերաբերող մի շարք բառեր՝ օգտվելով կրտսեր դասարանում իրենց ունեցած բառատետրերից և բացատրում են դրանց ուղղագրությունն ու ուղղախոսությունը: Այնուհետև ամրակայում և խորացնում են նախկինում ստացած գիտելիքները, և խնդիր ենք դնում սովորեցնել աշակերտի բառապաշարը հարստացնող նորանոր բառեր:

Իմաստի ընկալման փուլում հաղորդում ենք նոր նյութը:

Դասի սկզբին գրատախտակին գրում ենք հետևյալ շարքերը (հնարավորության դեպքում ցույց ենք տալիս պրոյեկտորով):

Ըստ խմբային հետազոտության մեթոդի՝ դասարանը բաժանվում է 6 խմբի: Ուսուցչի հանձնարարությամբ յուրաքանչյուր խումբ տետրում գրում է շարքերից մեկի բառերը, քննարկում և կատարում եզրահանգումներ ***է-ե*** ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ (միջանձնային մտածողություն): Մինչ ընդհանուր եզրակացություններ կատարելը աշակերտներին հիշեցնում եմ, որ ***է*** հնչյունը գրվում է երկու տառով՝ ***է-ե***: Այնուհետև ամեն մի խմբից մեկ աշակերտ հրավիրվում է գրատախտակի մոտ և ներկայացնում իր խմբի եզրակացությունը ***(ներանձնային մտածողություն), (լեզվական-խոսքային մտածողություն), (տեսողական-տարածական մտածողություն):***

1. Հայերենում բառասկզբում լսվող է-ն գրվում է է տառով:

(«Հայերենում բառասկզբում լսվող ***է***-ն գրվում է ***է*** տառով» պատրաստի ցուցանակը որպես խմբի անվանում տրվում է այդ եզրահանգումը կատարող խմբին):

2. Հայերենում բառասկզբում լսվող ե-ն գրվում է ե տառով:

(«Հայերենում բառասկզբում լսվող ***ե***-ն գրվում է ***ե*** տառով» պատրաստի ցուցանակը որպես խմբի անվանում տրվում է այդ եզրահանգումը կատարող խմբին):

3. Հայերենում օժանդակ բայի ներկա ժամանակի եզակի թվի երրորդ դեմքն է միայն գրվում է-ով, ինչպես որ լսվում է, իսկ մյուս ձևերում լսվող է-ն գրվում է ե տառով: Անցյալ ժամանակի բոլոր ձևերում լսվում և գրվում է է:

(«Հայերենում օժանդակ բայի ներկա ժամանակի եզակի թվի երրորդ դեմքն է միայն գրվում ***է***-ով, ինչպես որ լսվում է, իսկ մյուս ձևերում լսվող ***է***-ն գրվում է ***ե*** տառով: Անցյալ ժամանակի բոլոր ձևերում լսվում է և գրվում է ***է***». պատրաստի ցուցանակը որպես խմբի անվանում տրվում է այդ եզրահանգումը կատարող խմբին):

4. Հայերենում բառամիջում գրվող ե-ն կարդացվում է է:

(«Հայերենում բառամիջում գրվող ***ե***-ն կարդացվում է ***է***» պատրաստի ցուցանակը՝ որպես խմբի անվանում, տրվում է այդ եզրահանգումը կատարող խմբին):

5. Բառամիջում և բառավերջում է գրվում է միայն այն դեպքում, երբ առանձին արմատի սկզբնատառ է:

(«Բառամիջում և բառավերջում ***է*** գրվում է միայն այն դեպքում, երբ առանձին արմատի սկզբնատառ է» պատրաստի ցուցանակը՝ որպես խմբի անվանում, տրվում է այդ եզրահանգումը կատարող խմբին):

6. Բաղադրյալ բառերի մեջ, երբ ե-ով սկսվող արմատին նախորդում է ձայնավոր հնչյուն, ե-ն արտասանվում է յէ, իսկ երբ նախորդում է բաղաձայն հնչյուն, ե-ն արտասանվում է է:

(«Բաղադրյալ բառերի մեջ, երբ ***ե***-ով սկսվող արմատին նախորդում է ձայնավոր հնչյուն, ***ե***-ն արտասանվում է ***յէ***, իսկ երբ նախորդում է բաղաձայն հնչյուն, ***ե***-ն արտասանվում է ***է***» պատրաստի ցուցանակը՝ որպես խմբի անվանում, տրվում է այդ եզրահանգումը կատարող խմբին):

Վերջին շարքի բառերի վերաբերյալ կատարում ենք հետևյալ հավելումը. ***յէ*** արտասանվում է նաև ***ե***-ով սկսվող որոշ բառերում ու արմատներում, որոնց նախորդում են ***կ-, չ-*** մասնիկները: Նրանք կարող են արտասանվել ***կը, չը,*** այսինքն ***ե***-ին՝ +-կրկին նախորդում է ձայնավոր հնչյուն՝ *կերգեմ - կ(ը)երգեմ, չերգեմ - չ(ը)երգեցի:* Այս շարքի եզրահանգումը կատարվում է ուսուցչի օգնությամբ: Որպեսզի սովորողներն այս շարքերի բառերը միայն տեսողական հիշողությամբ չմտապահեն, առանձնացնում ենք բարդ բառերը, բաժանում բաղադրիչների և սովորեցնում, օրինակ՝ 5-րդ շարքի բառախմբի բառերի (*որևէ-որևիցե*) վերջին բաղադրիչը ***է*** օժանդակ բայն է, իսկ երկրորդ բառախմբի բառերն ավարտվում են գրաբարյան -***իցե*** վերջավորությամբ: Արդյունքում յուրաքանչյուր խումբ իր հետազոտած բառաշարքը ներկայացնում է ամբողջ դասարանին:

Վերջում ամփոփում ենք դասը. ներկայացնում ենք կատարված բոլոր եզրահանգումներին համապատասխան բառերի խումբ, և յուրաքանչյուր բառի հնչման ժամանակ պետք է կանգնի այն խումբը, որի եզրահանգմանն է պատկանում այդ բառը ***(մարմնաշարժողական մտածողություն), (ներանձնային մտածողություն):*** Հանձնարարում ենք տնային աշխատանք ***է-ե*** ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության շուրջ: Որպես լավագույն ուսումնական ձեռնարկ դասագործընթացում օգտագործում ենք Ռուբինա Նազարյանի «Մայրենին բոլորի համար» գիրքը:

Հաջորդ դասաժամին ստուգում ենք նյութի յուրացումը և ամփոփում տարաբնույթ վարժությունների և լեզվական խաղերի միջոցով: Նորից դասարանը բաժանվում է վեց խմբի *(միջանձնային մտածողություն):* Խմբերը հիշում են նախորդ դասին կատարած եզրակացությունները և հաստատում դրանք տնային առաջադրանքից բերված համապատասխան օրինակներով: Խմբերին տրվում են քարտեր՝ զանազան առաջադրանքներով:

Քարտ առաջին

Լրացնել սյունակները առնվազն չորսական բառով:

Քարտ երկրորդ

Լրացնել սյունակները:

Բառասկզբում լսվում է	բառամիջում բառավերջում լսվում է	բառամիջում գրվում է, լսվում է

Քարտ երրորդ

է-ով սկսվող անձնանուններ	ե-ով սկսվող վերջավոր կետեր	ե-ով սկսվող բուսանուններ

Տրված բառերը բաժանել բաղադրիչների՝ ընդգծելով ***է-ե*** ձայնավորներով սկսվող արմատները. *ելևէջ, ամենաերկար* և այլն:

Քարտ չորրորդ

Կազմել բաղադրյալ (բարդ, ածանցավոր) բառեր տրված արմատներով և բառերով. *էական, էաբան* և այլն:

Քարտ հինգերորդ

Տրված նախադասությունում լրացնել բաց թողնված օժանդակ բայերը. *Գարունը նոր... լցվում նրա երեկոների մեջ, և նա անդրջում ....՝ աչքերը տամկությամբ:*

Քարտ վեցերորդ

Տրված բառաշարքի ո՞ր բառերում է ընդգծված ***ե***-ն արտասանվում է, որոնցում՝ ***ե***. *հորեղբայր, ամենաեկամտաբեր* և այլն:

Քարտային առաջադրանքների ստուգումից հետո անցնում եմ լեզվական խաղերին: Խմբերին բաժանում եմ քարտեր, որոնցում կան ***էջ*** և ***է*** արմատներով բառեր: Գրատախտակին գրելով ***էջ*** և ***է*** բառերը, աշակերտները փորձում են նրանցով կազմել նոր բառեր, և ստացվում է մտքի քարտեզ:

1	2	3	4	5	6
էջ	էակ	եռ-ենք	շերամ	վարդէջք	բաղմերանգ
էջմիածին	եղրևանի	եռ-եք	հեծել	այգեէտ	վերելք
էտել	երևան	է-են	ձեղուն	մանրէ	հուվեկ
էմնա	եղջյուր	էի-էինք	սենյակ	դրդէրոցք	վրաերթ
էշ	եղիա	էիր-էիք	բերք	անէանալ	ինքնատեռ
էջանշան	եղյամ	էր-էին	կեղծիք	որևէ-որևիցե	ամենաերկար
էներգիա	եզր		գետ	երբևէ-երբևիցե	նրբերանգ
էկրան	երգ		գոնե՞	ինչևէ-ինչևիցե	նրբերշիկ
էական	երես		գրեթե	ոչևէ-որևիցե	կիսաեզի

☞ 10

ԽՈՐԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«ՀԱՐՍԱՆԻՔ ԼԵՌՆԵՐՈՒՄ» ԿԱՄ՝ ՊԱՐԶԱՊԵՍ ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍ

Մեր երկրագնդի վրա երկու ուժեր չեն հոգնում՝ ժամանակն ու հայը. մեկը կործանելով, մյուսը՝ վերաշինելով:

Գարեգին Նժդեհ

Ասում են՝ Աստված մարդկանց տվել է ապրելու տեղ, հող ու տարածք և ասել. «Եթե կարող եք, այն Հայրենիք դարձրեք»: Հայ ժողովուրդը իր բաժին հողատարածքը Հայրենիք է դարձրել արյուն-քրտինքով և իր փոքրիկ դրախտը ստեղծել է ավիշից քամած հայրենաստեղծ հայրենապաշտությամբ: Ասում են նաև, թե Աստված մարդկային ու անմարդկային ամեն տեսակ զրկանքներ է տվել ժողովրդիս ու ասել. «Ապրիր, եթե կարող ես, քայլիր, եթե կարող ես»: Եվ նա ապրեց, այն էլ ինչպե՜ս՝ իր անթիվ-անհամար ցավերը հաղթահարելով, առասպելական փյունիկի պես իր շեների ու ոստանների մոխիրներից հառնելով: Քայլեց, այն էլ ինչպես՝ քաղաքակիրթ ազգերի առաջին շարքերում՝ աշխարհին պարզած իր հոգու կանաչ-կարմիրը, որ նրա ստեղծածն է, նրա մտքի ու քանքարի փայլատակումները, նրա երազներից հյուսված հրաշալիքներն ու հրաշքները: Ապրեց և Արցախյան հուժկու շարժումով ապացուցեց համայն աշխարհին, որ Մհերը ելել է քարայրից, ըմբոստացել, շարժումը վերածել ազատամարտի և մեզ պարգևել մի նոր փայլուն հաղթանակ՝ Շուշին: Եվ Արցախը փաստացի վերամիավորվեց Մայր Հայաստանին, հիմնադրվեց հայկական երկրորդ պետությունը: Այսքանով հանդերձ, Շուշին նաև երկրորդ Սարդարապատ է, որ մեր հավաքական գիտակցության մեջ կրկին արթնացնում է հավատը սեփական ուժի հանդեպ, հոգեբանական պարարտ հող դառնում՝ ստրկախտը վերջնականապես թոթափելու համար: Ապրեց հայ ժողովուրդը, որ ապրեցնի, շենացնի, կրթի, դաստիարակի հայրենատենչ ու հայրենասիրության ոգով: Հենց այս նպատակն ենք հետապնդում մենք՝ ուսուցիչներս, որոնց ուսերին է դրված մատաղ սերնդի կրթության և հայեցի դաստիարակության ծանր, բայց պատասխանատու գործը: Եվ պատահական չէ, որ մայիսի 9-ին Ստեփանակերտի Ա.Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի տնօրինությունը, ուսուցչական ու աշակերտական կոլեկտիվները դպրոցի տնօրեն Լ. Գևորգյանի գլխավորությամբ նմանակեց Շուշիի ազատագրման «Հարսանիք լեռներում» օպերացիան: Այս միջոցառմանը մասնակցում էին նաև ԿՊԾ շեֆ-զորամասի զինվորները, Շուշիի ազատագրմանը մասնակից ազատամարտիկները, Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթամը վերածել ազատամարտի և մեզ պարգևել մի նոր փայլուն հաղթանակ՝ Շուշին: Եվ Արցախը փաստացի վերամիավորվեց Մայր Հայաստանին, հիմնադրվեց հայկական երկրորդ պետությունը: Այսքանով հանդերձ, Շուշին նաև երկրորդ Սարդարապատ է, որ մեր հավաքական գիտակցության մեջ կրկին արթնացնում է հավատը սեփական ուժի հանդեպ, հոգեբանական պարարտ հող դառնում՝ ստրկախտը վերջնականապես թոթափելու համար: Ապրեց հայ ժողովուրդը, որ ապրեցնի, շենացնի, կրթի, դաստիարակի հայրենատենչ ու հայրենասիրության ոգով: Հենց այս նպատակն ենք հետապնդում մենք՝ ուսուցիչներս, որոնց ուսերին է դրված մատաղ սերնդի կրթության և հայեցի դաստիարակության ծանր, բայց պատասխանատու գործը: Եվ պատահական չէ, որ մայիսի 9-ին Ստեփանակերտի Ա.Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի տնօրինությունը, ուսուցչական ու աշակերտական կոլեկտիվները դպրոցի տնօրեն Լ. Գևորգյանի գլխավորությամբ նմանակեց Շուշիի ազատագրման «Հարսանիք լեռներում» օպերացիան: Այս միջոցառմանը մասնակցում էին նաև ԿՊԾ շեֆ-զորամասի զինվորները, Շուշիի ազատագրմանը մասնակից ազատամարտիկները, Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի աշակերտներն ու մի խումբ ուսուցիչներ:

Միջոցառումը մեծ ոգևորություն և պատասխանատվություն ներշնչեց աշակերտների մեջ, քանզի նրանցից յուրաքանչյուրը գիտակցում էր, որ քայլում է արյամբ շաղախված մեր նահատակների հետքերով, և ակնհայտ է, որ՝ «Այնտեղ է լոկ սխրանքը սկսվում, ուր վերջանում է ամեն մի հնար»: Աշակերտներն ու ուսուցիչները, հաղթահարելով երեք ուղղությունների դժվարությունները, հանդիպեցին «Ազատարար տանկ» հուշակոթողի մոտ և հնչեցրին ռազմաշունչ երգեր՝ կարծես ավետելու մեր նահատակներին, որ տերն ենք նրանց սուրբ արյան գնով ձեռք բերածի: Հետո շարժվեցին դեպի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցի՝ աղոթելու առ Աստված մեր մարտիրոսների հոգու հանգստության համար, իսկ Ջդրդուզ տեղամասում շուրջպարի բռնեցին ոչ միայն միջոցառման մասնակիցները, այլև բոլոր ներկաներն ու ականատեսները:

Օրը երանելի էր, իսկական տոնական... Եվ մեր աշակերտները սերտեցին ամենակարևոր դասը. «Մեր մեծագույն հաղթանակները մենք ձեռք ենք բերում, երբ «մեծ քաղաքականությունից» կտրվում ենք և մնում ինքնուրույն»: Մնում է ասել.

Օ՜, իմ Շուշի,
Քո քարեղեն օրորոցում, `
Քո լեռների ծերպ ու ծոցում,
Երազներիդ շող ու բոցում
Մանուկներ են խայտում հիմի,-
Մանուկներն այդ մի օր պիտի
Ելնեն ոտի, կապեն գոտի,
Դիմեն դեպի սարը մոտի,
Դառնան տերը հայոց բերդի,
Նորից շինեն ու շենացնեն,
Որ միշտ ծաղկես, հայո՜ց Շուշի:

Օգտվելով առիթից՝ Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցի տնօրինությունը իր երախտագիտության խոսքն է հղում ԼՂՀ կրթության և գիտության նախարարությանը, Ստեփանակերտի կրթության բաժնին, Ստեփանակերտի քաղաքապետին, ոստիկանությանն ու փրկարար ծառայությանը, ԿՊԾ հրամկազմին և զինվորներին ու բոլոր նրանց, ովքեր իրենց լուման են ներդրել՝ միջոցառումը բարձր մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար:

Ստեփանակերտի Ա.Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի ուսուցչական կոլեկտիվ

ՀՈՎԱՐԴ ԳԱՐԴՆԵՐԻ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ

9 ☜ Լեզվական այս խաղերը սովորողներին մղում են ինքնուրույն մտածողության, և որ ամենակարևորն է, նրանք կարողանում են բառը բաժանել բաղադրիչների, ճանաչել արմատն ու ամրակայել նրա ուղղագրությունն ու ուղղախոսությունը: Այս խաղի մյուս առանձնահատկությունն այն է, որ ամբողջ դասարանը բաժանված քարտերի միջոցով մեկ անգամ ևս հանգամանորեն կարդում է նախորդ դասին սովորած բառերը ու տեսողական հիշողությամբ ամրակայում:

Հանձնարարում ենք խմբերին՝ ստեղծել ***է-ե*** ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության կանոնների մտքի քարտեզը: Այս փուլում ևս դասարանը բաժանվում է 4 խմբի ***(միջանձնային մտածողություն):*** Ամեն խմբի ներսում յուրաքանչյուր աշակերտ դասագրքի վարժություններից ընտրում է որևէ կետի ուսումնասիրությունը: Խմբերը ձևավորվում են ըստ աշակերտների ընտրած ուսումնասիրության կետերի: Խմբերը պետք է աշխատեն իրենց ընտրած կետերի շուրջ: Պետք է ուշադիր կարդան այդ կետում գրվածը, ապա գտնեն բառեր, որոնք սկսվում են ***է*** հնչյունով: Աշխատում են նոր բառեր գտնել, որոնք դասագրքում գրված չեն: Այս աշխատանքը ուսուցիչը կարող է մի քիչ բարդացնել՝ առաջարկելով այդ բառերից մի քանիսը գործածել բառակապակցությունների և նախադասությունների մեջ, ինչպես նաև նյութն ավելի մատչելի դարձնելու համար գունային տարբերակումներ մտցնել, նոր հնարներ փնտրել, աղյուսակներ գծել և այլն ***(մարմնաշարժողական մտածողություն):***

Խումբն իր կատարած աշխատանքը գրառում է մեծ թղթերի վրա, գունավորում և փակցնում է դասասենյակի պատին: Երբ բոլոր խմբերն ավարտում են իրենց առաջադրանքի կատարումը, վերադառնում են նախկին խմբերը, հետո սկսում շրջել դասասենյակով և դիտել փակցված թերթերը («Շրջագայություն պատկերասրահում» մեթոդը): Իսկ այն սովորողը, որը մասնակցել է այդ պաստառի ստեղծման և լրացման աշխատանքներին, բացատրություններ է տալիս տվյալ կանոնի և բերված օրինակների՝ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների վերաբերյալ ***(ներանձնային մտածողություն), (լեզվական-խոսքային մտածողություն), (տեսողական-տարածական մտածողություն)%*** Այսինքն՝ նոր նյութը սովորում են անմիջապես դասարանում՝ միմյանց բացատրելով իրենց սովորածը: Վարժությունների բաժնից, ինչպես նաև աշխատանքային տետրերից որոշ առաջադրանքներ՝ իբրև ինքնուրույն աշխատանք, դասարանում կարելի է կատարել տալ: Այսպիսի հանձնարարությունները թեմայի յուրացումն ամրապնդելու և ստուգելու նպատակ ունեն: Որոշ առաջադրանքներ էլ կարելի է հանձնարարել, որ տանը կատարեն: Բայց լավ կլինի, որ տնային առաջադրանքները տարբեր լինեն, ասենք, յոթ հոգի կատարում են առաջին վարժությունը, մյուս տասը՝ երրորդը և այլն:

Անհրաժեշտ է հիշել տարբեր կարողություններ ունեցող սովորողների մասին և հանձնարարությունները տալ՝ հաշվի առնելով այդ հանգամանքը: Ուստի ուսուցիչը տանը նախապես պիտի ուսումնասիրի թե՛ դասագրքում, թե՛ աշխատանքային տետրում տրված առաջադրանքները, դրանցից ընտրի, թե ո՛ր առաջադրանքը որ աշակերտին կամ սովորողների որ խմբին հանձնարարի:

Դասի վերջին փուլում անհրաժեշտ է ամփոփել, հնարավորություն տալ սովորողներին արժևորելու, օգտագործելու, կիրառելու իրենց սովորածն ու կիրառելու դասագործընթացում:

Ուղղագրության յուրացումն ստուգելու կարևոր միջոց է նաև թելադրությունը, որը միջին դասարաններում գրավոր աշխատանքի հիմնական տեսակներից է: Ուղղագրական տեսակետից դժվարություն ներկայացնող բառերի գրությունը յուրացնելուն առավելապես օգնում են ուսուցողական թելադրությունները (բացատրական, դիտողական և այլն): Օրինակ՝ մենք ավելի ենք խտացնում բնագրերի բառապաշարը և դրանք թելադրում ենք յուրաքանչյուր դասի՝ տաս որպե տնողությամբ և՛ որպես թելադրություն, և՛ որպես թելադրություն-առաջադրանք՝ որոշակի պահանջներով: Թելադրության բնագիրը թելադրելուց հետո տալիս ենք բազմազան առաջադրանքներ:

Կարևոր է նաև բառային թելադրությունը, որը նույնպես կարող է ուղեկցվել տարբեր առաջադրանքներով: Այս տիպի թելադրության ընթացքում աշակերտները սովորում են դժվար գրություն ունեցող բառերը, ճանաչում դրանց բառակազմական և ձևաբանական օրինաչափությունները: Այս մեթոդը կարելի է կիրառել դասի տարբեր փուլերում: Թելադրությունը տևում է 5-7 րոպե: Այնուհետև ստուգվում են այդ բառերի ուղղագրությունը, իմաստի ըմբռնումը, յուրացման մակարդակը: Բառային թելադրություն-առաջադրանքը կարող է ունենալ տարբեր նպատակներ:

1. *Առ.1.* Թելադրում ենք բարդ կամ ածանցավոր բառեր, որոնց վերջին բաղադրիչն սկսվում է ***ե***-ով, և պահանջում եմ ուշադիր լսել, գրել, որոշել, թե որ դեպքում է արտասանվում ***է***, որ դեպքում ***ե*** և բացատրել, թե ինչու:

2. *Առ.2.* Թելադրել արմատական բառեր՝ ***է*** և ***ե*** ձայնավորներով սկսվող և առաջադրել դրանք գործածել բարդություններում՝ որպես երկրորդ բաղադրիչ:

Ուղղագրության և ուղղախոսության ուսուցումն ավելի մատչելի և հեշտ է դառնում, երբ սովորողներին տալիս ենք թեմային համապատասխան առաջադրանքներ: Թեման առավել հետաքրքիր և նպատակային է դառնում, երբ կիրառում ենք ուսուցման խնդրահարույց եղանակները:

Օրինակ 1. Գտնել տրված բառերի ուղղագրական սխալները և պատճառաբանել, թե ինչ չիմանալու հետևանքով են թույլ տրված դրանք:

2. Գծիկներով անջատել տրված բաղադրյալ բառերի բաղադրիչները, գտնել արմատները և հիմնավորել, թե ինչու է արմատների մի մասը գրվում ***է***-ով, մյուսը՝ ***ե***-ով. *մանրէաբան, կիսաեզրափակիչ* և այլն:

Նմանատիպ շատ առաջադրանքներ կարելի է ներկայացնել աշակերտներին: (Նրանց գիտելիքների իմացության մակարդակը գրանցված է հավելվածում): Ուղղագրության ուսուցման ընթացքում աշակերտները սովորած բոլոր բառերը պետք է գրանցեն բառատետրերի ուղղագրական մասում, իսկ իմաստային տեսակետից դժվարություն ներկայացնողները՝ բացատրական մասում:

Խիստ կարևորվում է այն, որ սովորողները նյութը յուրացնեն ոչ միայն լսելով, դիտելով, մտապահելով, այլև մասնակցելով, բանավիճելով, ինքնուրույն մտքեր արտահայտելով:

Անհրաժեշտ է, ինքնուրույն մտքեր հայտնելով, խուսափել այն իրավիճակից, երբ սովորողը պասիվ լսողի վիճակում է:

Հիշենք հայտնի ասացվածքը և միշտ հետևենք դրան.

«Ես լսում եմ և մոռանում, ես տեսնում եմ և մտապահում, ես կատարում եմ և սովորում»:

* * *

Դասի որևէ պլանավորում պարտադրող բնույթ չի կարող կրել, այն կարող է կառուցվել որպես նմուշօրինակ, մեթոդական խորհուրդ և ուղղորդելու, աջակցելու նպատակ:

Կյանքում տեղի ունեցած փոփոխությունները ենթադրում են նաև փոփոխություններ դպրոցական համակարգում:

Դպրոցը ուսուցչակենտրոնից դարձել է աշակերտակենտրոն: Աշակերտը պետք է վարժվի համագործակցության, որը կօգնի, որ նա սովորի մասնակցել հասարակական կյանքում կատարվող տեղաշարժերին:

Աշակերտը չպետք է լինի գնահատակամոլ, նա պետք է ձգտի շարունակական ինքնակրթության և ինքնակատարելագործման:

Ծանոթություն

Խմբային բոլոր աշխատանքները պետք է նպաստեն անձի սոցիալականացման խնդրի իրականացմանը: Միևնույն խմբի աշակերտները, լավ ճանաչելով միմյանց թույլ և ուժեղ կողմերը, իրենք պետք է հրահանգավորեն միմյանց ու կատարեն «դերաբաշխում»: Ուսուցիչը պետք է միայն հարցի պատասխանը պահանջի նրանցից:

Արմինե ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷՐ ԱՄԲՈՂՋ ՋՈՐԱՎԱՆԸ

Ընտանիք-դպրոց-բանակ. ահա այն երեք կառույցները, որոնց նպատակամետ գործունեությամբ կրթվում և դաստիարակվում է աճող սերունդը: Այս եռամիասնության արդյունավետ աշխատանքի շնորհիվ երկիրը կունենա կիրթ, դաստիարակված և հայրենապաշտ սերունդ: Վերջին տարիներին հանրապետությունում բանակ-ընտանիք-դպրոց կապի ամրապնդման թեմաներով բազմաթիվ միջոցառումներ և քննարկումներ են անցկացվում, յուրաքանչյուր պատեհ առիթ օգտագործվում է, որպեսզի հայրենիքի նվիրյալ սերունդ դաստիարակվի, սերունդ, որ պետք է սրբությամբ պահպանի և զարգացնի հայրերի արյան գնով ձեռք բերած նվաճումները:

Մայիսը հայ ժողովրդի համար հաղթանակների ամիս է, արցախահայերի համար՝ Եռատոն, ու պատահական չէ, որ հանրապետության բոլոր բնակավայրերում, մշակույթի և կրթության օջախներում կազմակերպվում են հանդիսավոր միջոցառումներ՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի, Շուշիի ազատագրման և ԼՂՀ պաշտպանության բանակի օրվան: Նմանատիպ միջոցառումների արդյունավետությունը, որոնք միտված են աճող սերնդին ազգային գաղափարախոսությամբ դաստիարակելուն, տեսանելի ու շոշափելի է այնտեղ, որտեղ աշխատանքները համակարգվում են վերը նշված երեք օղակների մասնակցությամբ:

Մայիսի 8-ին Զորավանի միջնակարգ դպրոցում մայիսյան տոներին նվիրված տոնակատարությունն այդ եռամիասնության սերտ համագործակցության արդյունք էր:

Դպրոցի տնօրինության, ուսուցչական և աշակերտական կոլեկտիվների, 2-րդ պաշտպանական շրջանի հրամանատարության և ծնողական կոմիտեի հետևողական ու նպատակասլաց աշխատանքի շնորհիվ անցկացված միջոցառումը հասավ իր նպատակին:

Տեսնել էր պետք, թե ինչպիսի հափշտակությամբ, լրջությամբ, հավատով, սիրով էին դպրոցականներն ունկնդրում զինվորականների, իրենց ուսուցիչների, ծնողների և հենց ընկերների կատարումները: Նրանց վառվռուն աչքերում, ժպիտ-ծիծաղներում մեր վաղվա լուսավառ ապագան էր երևում: Նայելով նրանց խանդավառ հայացքներին, խրոխտ պարերին, ըմբոշխնելով վեհ ու մարտակոչ երգերն ու ասմունքը՝ համոզվում ես, որ այս սերունդը հայրենադավ չի դառնա, որ նման դաստիարակություն ստացող աշակերտը վաղը մեր երկրի սահմանը հաստատ անառիկ կպահի, որ հայրերի կորցրածը վաղ թե ուշ ետ կվերադարձնի:

Չափազանցրած չեմ լինի, եթե ասեմ, որ արտաքուստ հեշտ կազմակերպվող, բայց իրականում մեծ ջանք ու եռանդ պահանջող այդ միջոցառմանը ոգի տվողը և կազմակերպողը դպրոցի ՄԿԱԳ փոխտնօրեն Գ. Մաթևոսյանն է: Մարդ, ով ամենայն պատասխանատվությամբ է վերաբերվում իր պարտականությունների կատարմանը, մանկավարժ, ով կարողանում է մշակի պես ընտրել, զտել, ջոկել հունդը որոմից, ով ի հայտ է բերել ուսուցչական և աշակերտական կոլեկտիվների կարող ուժերը, շնորհաշատ ծնողներին և մի կուռ թիմ ստեղծելով՝ նրանց եռանդը նպատակամղել հայրենիքի նվիրյալ սերունդ դաստիարակելու վեհ գործին:

Միջոցառման կայացմանը մեծապես նպաստել է 2-րդ պաշտպանական շրջանի հրամանատարությունը՝ Գ. Գաբրիելյանի գլխավորությամբ, դպրոցի ծնողական խորհուրդը, որի աշխատանքները համակարգում է Ս. Թադևոսյանը: Միջոցառման գլխավոր նպատակը Եռատոնի խորհրդի իմաստավորումն էր, հայ ժողովրդի անցած դժվարին, բայց փառավոր անցյալի մեկնաբանումը, որոնք իրականացվեցին զինծառայողների, ծնողների, ուսուցիչների և սովորողների համատեղ աշխատանքով:

Այն սկսվեց «Զարթոնք» ՄՊԿ հանդիսավոր տողանով և ԼՂՀ դրոշի ներսբերումով, որի ներքո ողջ աշակերտական կոլեկտիվը միահամուռ երդում տվեց՝ հայրենիքի պաշտպանությանը լինել միշտ պատրաստ: Միջոցառումը վարում էր և բացման խոսքով հանդես եկավ Գ. Մաթևոսյանը, ով կարևորելով մայիսյան հաղթանակները, արժևորեց Արցախյան պատերազմում հայ ժողովրդի համախմբվածության արդյունքում տարած պատմական հաղթանակը, պայքարի բովում ծնված, հասունացած և առնականացած Հայոց բանակը, որն այսօր հայ ժողովրդի անվտանգության ամենահուսալի գրավականն է:

Ելույթներով հանդես եկան դպրոցի տնօրեն Ս. Արզումանյանը և 2-րդ ՊՇ հրամանատար Գ. Գաբրիելյանը: Բանախոսները պատմական ակնարկ կատարեցին ու ներկայացրին հայ ժողովրդի ճակատագրում կարևոր դերակատարություն ունեցած պատմական դեպքերը՝ Ավարայրից մինչև Արցախյան գոյամարտ: Նրանցից յուրաքանչյուրը բախտորոշ էր հայ ժողովրդի համար, յուրաքանչյուրում վճռվում էր հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը, ու մենք կարողացանք վճռական պահին համախմբվել, լինել միակամ և աներեր, թշնամուն ցույց տալ մեր բազկի ուժը, մեր ոգու անպարտելիությունը: Այս էր ելույթների իմաստը, որ հասցվեց միջոցառման մասնակիցներին:

Այս համատեքստում զորամասի հրամանատարը նշեց, որ հայ ժողովրդի տարած հաղթանակներն ավելի իմաստավորվեցին Շուշիի ազատագրմամբ, որը պատմական խոշոր իրադարձություն էր և ցույց տվեց, որ սեփական ուժերով կարող ենք պաշտպանել մեր օջախը, մեր հավատը, մարդկային իրավունքներն ու արժանապատվությունը: Շու-շիի հաղթանակը նաև ԼՂՀ պաշտպանության բանակի ծննդյան ավետիսն էր, որն այսօր մեր ժողովրդի հուսալի պաշտպանն է: Գ. Գաբրիելյանը դպրոցականներին կոչ արեց միշտ վառ պահել հայրենիքի անկախության և ազատության համար իրենց կյանքը զոհաբերած քաջորդիների հիշատակը, նվաճել գիտության բարձունքները, հայրենի երկիրն ավելի բարգավաճ դարձնել, հզորացնել այն, պատրաստ լինել հերթափոխի ընդունմանը՝ զինվորագրվելով Հայոց պանծալի բանակին:

Ելույթներից հետո դպրոցի տնօրենն ուսման մի շարք առաջավորների և սպորտային խաղերում շրջանում և հանրապետությունում մրցանակային տեղեր գրաված աշակերտներին պատվոգրեր և նվերներ հանձնեց:

Այնուհետև սկսվեց տոնական ցերեկույթը, որին իրենց ակտիվ մասնակցությունը բերեցին դպրոցի աշակերտները, զինվորները, ուսուցիչները և ծնողները: Մի խոսքով, կարելի է ասել, որ օրվա միջոցառմանը մասնակցում էր ամբողջ Զորավանը, ու տոնը հիրավի ժողովրդական բնույթ կրեց:

Ռոմիկ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՆԱԽՆԱԴԱՐԻՑ՝ 4-ՐԴ ԴԱՐ

Մայիսի 16-ին Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցում աշակերտների ուժերով և Հայ եկեղեցու պատմության ուսուցչուհի Լաուրա Թորոսյանի նախաձեռնությամբ ու կազմակերպմամբ կայացած միջոցառումը նվիրված էր հայ ժողովրդի կողմից առաջինը որպես պետական կրոն՝ քրիստոնության ընդունմանը (301թ.): Հանդիսատեսը դպրոցի աշակերտներն էին, ուսուցիչները՝ տնօրեն Անահիտ Քոսակյանի հետ, ծնողներ: Սկզբում ցուցադրվեց տեսաֆիլմ, որը պատմում էր Նեմրութի գագաթին գտնվող հայոց հին աստվածների արձանախմբերի մասին, որոնք Կոմագենի Անտիոքոս Առաջին Երվանդունի թագավորի (մ.թ.ա. 69-34) կառուցած դամբարանաբլուր սրբավայրում են: Ֆիլմի հեղինակը տեղեկացրեց հին աստվածների՝ Արա-Արամազդի, Անահիտ դիցուհու և մյուսների մասին: Նշվեց, որ բոլոր աստվածներն էլ ունեցել են տաճարներ, և հետագայում՝ Քրիստոնեության մուտքից հետո ավերվել են, իսկ Անահիտ դիցուհուն նվիրված տաճարների հիմքի վրա կառուցվել են քրիստոնեական եկեղեցիներ և անվանվել Մարիամ Աստվածածին: Այնուհետև դպրոցի տարբեր դասարանների աշակերտները ներկայացրին Ագաթանգեղոսի նկարագրած պատմությունը Հայոց Տրդատ Մեծ թագավորի և Գրիգոր Լուսավորչի մասին: Ուրախությամբ պետք է ասեմ, որ մեր երեխաները նաև լավ դերասաններ են: Նախ լավ էին սերտել հայոց պատմությունը և կարողացան լավ բեմականացնել: Իրենց խաղով աչքի ընկան Արեն Հովհաննիսյանը (Տրդատ Մեծ) և Արա Մասկալը (Գրիգոր Լուսավորիչ), փոքրիկ հրեշտակները, զինվորներն ու պալատականները: Երեխաների շնորհիվ տեղափոխվեցինք 4-րդ դար, ներկա եղանք Տրդատ Մեծի կազմակերպած տոնախմբությանը, որտեղ Տրդատի սիրելի Գրիգորը հրաժարվեց մեծարել Անահիտ դիցուհուն և ենթարկվեց տանջանքների: Հանուն Քրիստոսի՝ անդրդվելի մնաց Գրիգորը և դատապարտվեց մահվան ու գցվեց Արտաշատի բանտի խոր փոսը: Աշակերտ-դերասանները կարողացան ներկայացնել այդ պահերը, Հռիփսիմյաց կույսերի մասին: Խոր Վիրապում Գրիգորին պաշտպանում էին բարի հրեշտակները: Ներկայացումն ավարտվեց Գրիգորի՝ բանտից ազատվելով և Տրդատի բուժումով:

Վերջում աշակերտները ներկայացրին Քրիստոսի հայտնի պատվիրանները՝ ՝իրենց ելույթն ավարտելով Տերունական աղոթքով: Բավականին լավ էր ձևավորված բեմը, ժամանակին համահունչ էին հագուստն ու զենքերը: Լաուրա Թորոսյանը, լինելով նկարիչ, ինքն էր պատրաստել ու նկարազարդել զինվորների վահանները, որոշ դեկորներ, մասնավորապես՝Խոր Վիրապի պատը: Շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի առաջատար մասնագետ Ալվարդ Սարգսյանը ողջունեց աշակերտների ելույթը՝ կարևորելով նման միջոցառումների դերը: Հիրավի, բացի դասաժամերից, կարևոր են այսպիսի հանդեսները, որոնք խթանում են գիրք ընթերցելուն և պատմությունը սովորելուն:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

Շնորհավորանք

ԻՐ ԳՈՐԾԻ ՆՎԻՐՅԱ-

Յուրաքանչյուր մարդ, անկախ մասնագիտությունից և զբաղեցրած պաշտոնից, կարիք ունի դրվատանքի, երբ բարեխղճորեն է կատարում իր աշխատանքը, իրեն վստահված գործը: Անկեղծ շնորհավորանքի և շնորհակալության ջերմ ու բարի խոսք ենք ուզում ասել Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Սուսաննա Ստեփանյանի մասին:

Ծնվել է 1964թ. մայիսի 25-ին, Ստեփանակերտ քաղաքում: 1982թ. ավարտելով Ստեփակերտի հ. 2 միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է մայրաքաղաքի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը: 1985թ. ավարտել է ինստիտուտը և նույն թվականին աշխատանքի անցել քաղաքային կուլտուրայի տանը՝ որպես կուլտկազմակերպիչ: 1986-1987թթ. աշխատել է Ստեփանակերտի հ. 21 պրոֆտեխուսումնարանում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: 1988-1996թթ. Ս. Ստեփանյանն աշխատել է Ստեփանակերտի հ. 1 ԲՇԳ -ում՝ որպես սպորտհրահանգիչ:

1998թ. սեպտեմբերին աշխատանքի է անցել Ստեփանակերտի հ. 6 դպրոցում՝ որպես մանկապատանեական կոլեկտիվի կազմակերպիչ: 2000թ. փետրվարին նշանակվել է նույն դպրոցի արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ: 2009-ից մինչ օրս Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալն է:

Ամուսնացած է, ունի երկու արու զավակ:

Ս. Ստեփանյանը որտեղ էլ որ աշխատել է, միշտ աչքի է ընկել բարեխղճությամբ ու աշխատասիրությամբ, մարդկային բարձր որակներով: Կիրթ և կուլտուրական անձնավորություն է, խոհեմ ու գրագետ, համբերատար ու կազմակերպված: Նա լավ է հասկանում, որ փոխտնօրենը ուսուցիչների բարի, անկեղծ ու անաչառ խորհրդատուն ու ընկերը պիտի լինի:

Ս. Ստեփանյանը հաճախակի է կատարում դասալսումներ, դրանք մանրակրկիտ վերլուծում, տեղին ու համապատասխան դիտողություններ անում, բացահայտում հաջողություններն ու բացթողումները: Նա անշահախնդիր ու սիրով օգնում է բոլորին, հատկապես՝ անփորձ և երիտասարդ ուսուցիչներին:

Բանիմաց ու ողջախոհ ուսուցչուհին հեղինակ է հետաքրքիր ու բովանդակալից բազմաթիվ դասերի և տարաբնույթ ուսանելի միջոցառումների: Ս. Ստեփանյանի յուրաքանչյուր դաս վստահություն է ներշնչում, որպեսները թռչում են արագ ու աննկատ: Հարուստ ու գեղեցիկ է նրա խոսքը, ձայնը՝ նուրբ ու հաճելի:

Այսօր նա 50 տարեկան է և շարունակում է աշխատել ոչ պակաս եռանդով ու պատասխանատվությամբ:

Սիրելի՛ տիկին Ստեփանյան, շնորհավորելով հիսուներորդ գարունդ, անկեղծորեն մաղթում ենք բազում կենսախինդ ու զվարթ գարուններ: Թո՛ղ գարնանային ցողապատ ծաղիկներն իրենց բույրով ու թարմությամբ լցնեն Ձեր ամեն մի օրը: Մաղթում ենք Ձեզ արևշատություն, բեղմնավոր աշխատանք՝ ի շահ աճող սերնդի կրթության և դաստիարակության վեհ գործի: Թո՛ղ գալիք գարունները հաճելի անակնկալներ ու երջանիկ պահեր պարգևեն Ձեզ: Եղեք միշտ այդպես հմայիչ, կանացի ու սիրունատես:

Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՎԵՐՋԻՆ ԷՋ

«ԿԳԱՄ», «ԻՆՁ ԲԱՑԱԿԱ ՉԴՆԵՔ»

Տարին սահյանական է ու հանրակրթական բոլոր դպրոցներում պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ՝ նվիրված հայ մեծ բանաստեղծ Համո Սահյանին: Այս շրջանակում մի գեղեցիկ գրական գեղարվեստական ցերեկույթ կազմակերպվեց Մարտունու հ. 1 ավագ հոսքային դպրոցում: Նախաձեռնությունը դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհիներինն էր, որն իրականացվեց նրանց, երաժշտության ուսուցիչ Վլադիմիր Շիրինյանի և դպրոցի շնորհաշատ սովորողասմունքողների համատեղ աշխատանքի շնորհիվ: Հրավիրված էին շրջկենտրոնի դպրոցների և հ. 1 դպրոցից թոշակի անցած հայոց լեզվի և գրականության ուսուցիչները:

Ցերեկույթը բացման խոսքով սկսեց հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Զուլիետա Սարգսյանը: Նա խոսեց Հ. Սահյանի՝ հայ գրականության մեջ ունեցած անգնահատելի և ուրույն դերի մասին, ներկայացրեց նրա յուրահատուկ համ ու հոտով ստեղծագործությունների առանձնահատկությունները: Այնուհետև բանաստեղծի ստեղծագործությունների ասմունքով հանդես եկան դպրոցի սաները, որոնց մեծ մասը շրջանային, հանրապետական և համահայկական ասմունքի մրցույթների դափնեկիրներ են, դիպլոմակիրներ: Բավականին յուրահատուկ ներկայացում էր դա, որտեղ և՛ ապրում կար, և՛ զգացմունքայնություն, դերասանական վարպետությամբ համեմված խոսք: Չնայած իրենց բավականին կարճ կենսագրության՝ այն տպավորությունն էր, թե Սահյանի ապրածի խորությունն են զգում, կյանքի փիլիսոփայությունը, բնության և մարդկային հոգու ողջ անկանխատեսելիությունն ու հմայքը: Գեղեցիկ էր, տրամադրող, հաճելի: Հետաքրքիր էին և երգերի կատարումները՝ Վ. Շիրինյանի նվագի ուղեկցությամբ, ինչպես և ուսուցչի հետ համատեղ:

Ցերեկույթի ավարտին մասնակիցներին և կազմակերպիչներին շնորհակալանքի խոսք ասաց դպրոցի տնօրեն Կարինե Պողոսյանը՝ հավատ ներշնչելով, որ Սահյանը հավերժական է ու միշտ մեզ հետ, ինչի մասին իր բանաստեղծություններն են ասում՝ «Ինձ բացակա չդնեք», «Կգամ»: Ու նա վերադառնում է՝ յուրաքանչյուր իր բանաստեղծության հետ, յուրաքանչյուր բանաստեղծության մեջ, գալիս ու հավերժական է դառնում, մնալով ոգեշնչման, գեղեցիկի ու հավերժականի շեփորահար:

Սահյանը եղել ու մնում է գունագեղ նկարիչ, ում հաջողվել է բնության ողջ հմայքը, գեղեցկությունը, ճոխությունը ներկայացնել ամենազոր և հրաշակերտ հայոց լեզվով:

Համո Սահյանին նվիրված ցերեկույթից ներկաները հեռացան ավելի սահյանացած, ասել է, թե՝ ավելի հայ, ավելի կյանքին սիրահարված:

Կարինե ԴԱՎԹՅԱՆ

ՏԱՐԵՔ ՁԵԶ ՀԵՏ

(2014թ. շրջանավարտ սաներիս)

Թևերս առե՛ք, թռե՛ք ազատ
Երազների ձեր ուղիով
Ու թե հանկարծ սիրտս էլ ուզեք,
Առե՛ք ձեզ հետ, ձեզ հետ լինի:

Եթե ճամփին խավար լինի,
Հանե՛ք սիրտս, կերո՛ն դարձրեք,
Լույսն աչքերիս հանե՛ք, տարե՛ք,
Տարե՛ք ձեզ հետ, ձեզ հետ լինի:

Փույթ չէ, թե որ լույս չունենամ,
Սիրտ ու հոգի, թև չունենամ,
Չէ՞ որ ձեր մեջ կապրեմ հավետ,
Առե՛ք ձեզ հետ, տարե՛ք ձեզ հետ:

Սերս այս մեծ մոմեր դարձրե՛ք,
Վառե՛ք ճամփին, թե մութ լինի,
Առե՛ք ձեզ հետ, տարե՛ք ձեզ հետ,
Տարե՛ք ձեզ հետ, ձեզ հետ լինի:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ
Խնապատի միջն. դպրոցի ուսուցչուհի

Մարզական

ՓՈԽԱՆՑԻԿ ԳԱՎԱԹԸ ՄՇՏԱՊԵՍ ՀԱՆՁՆՎԵՑ ՄԵԾ

Մայիսի 13-15-ը Ստեփանակերտի հանրապետական մարզադաշտում կայացան հանրակրթական ուսումնական հաստատությունների 3-6-րդ դասարանների միջև ԼՂՀ Ազգային ժողովի փոխանցիկ գավաթի խաղարկության հերթական հանրապետական մրցումները:

Ներկայացել էին քաղաքային, շրջանային փուլերում հաղթող ճանաչված 3-6-րդ դասարանները:

Յուրաքանչյուր դասարանում ընդգրկված էին 4 աշակերտ (2 տղա, 2 աղջիկ):

Մրցումների ծրագրով նախատեսված էին՝

- վազք 30մ (3-րդ դասարաններ),
- 60մ (4-6-րդ դասարաններ),
- թենիսի գնդակի նետում թափավազքից,
- հեռացատկ,
- ձգումներ կախ դրությունից (տղաներ).
- ձգումներ կախ պառկած դրությունից (աղջիկներ),
- 4x50մ փոխանցումավազք (3-րդ դասարաններ),
- վազք 500մ (4-6-րդ դասարաններ):

Ավանդական դարձած մրցումները մեծ մասսայականություն են վայելում դպրոցականների շրջանում, որի ապացույցը յուրաքանչյուր տարի դպրոցականների ցույց տված արդյունքների զգալի աճն է:

Մրցումների հանդիսավոր բացման օրը ԼՂՀ ԱԺ նախագահ Ա. Ղուլյանը, ողջունելով մրցումների մասնակիցներին, նշեց, որ ներկայացել են արդեն քաղաքային (շրջանային) փուլում հաղթող ճանաչված դասարանները և մաղթեց բարձր արդյունքներ հանրապետական մրցումներում՝ կարևորելով, որ ամեն տարի մրցումները կազմակերպվում են Մայիսյան հաղթանակների օրերին ու շնորհավորեց Մայիսյան եռատոնի առթիվ:

Թիմերի ավագները Արցախի օրհներգի տակ բարձրացրին ԼՂՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության դրոշը, իսկ բոլոր մասնակիցները կատարեցին ԼՂՀ օրհներգը:

Երկօրյա համառ մրցապայքարի արդյունքներով որոշվեցին հաղթող թիմերը, հաղթող դասարանները և լավագույն արդյունքներ ցուցաբերած դպրոցականները;

Թիմային հաշվարկով 3-րդ մրցանակային տեղը գրավեց Մարտունու շրջանի հավաքականը, որի կազմում ընդգրկված էին Սոսի միջնակարգ (4-րդ ու 5-րդ դասարաններ), Մարտունի քաղաքի հ. 2 հիմնական (3-րդ դասարան) և Ղուզե ճարտարի միջնակարգ (6-րդ դասարան) դպրոցները:

2-րդ տեղը գրավեց Ստեփանակերտ քաղաքի հ. 1 հիմնական դպրոցի թիմը, իսկ մրցումներում 3-րդ տարին անընդմեջ հաղթող ճանաչվեց Հադրութի շրջանի Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցի թիմը, որի բոլոր չորս դասարանները լավագույն էին:

Նշենք, որ համաձայն կանոնադրության, Ազգային ժողովի փոխանցիկ գավաթը երեք անգամ անընդմեջ նվաճելու դեպքում այն մշտապես հանձնվում է տվյալ դպրոցին:

Մրցումների հանդիսավոր փակման ժամանակ ԱԺ նախագահ Ա. Ղուլյանը, շնորհավորելով Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցի աշակերտներին, գավաթը հանձնեց նրանց և մասնակիցներին մաղթեց հետագա հաջողություններ և հաղթանակներ:

ԱԺ նախագահը, հատուկ նշելով Մեծ Թաղերի դպրոցի աշակերտների ու նրանց ուսուցիչ Ռ. Ավետիսյանի հաջողությունները, խոստացավ նրանց ամբողջ թիմով ԱԺ հովանավորությամբ էքսկուրսիա Գանձասար:

Մրցանակային 2-րդ և 3-րդ տեղեր գրաված թիմերը ԱԺ-ի կողմից արժանացան պատվոգրերի ու հուշանվերների:

Մրցանակային տեղեր գրաված թիմերը դիպլոմներ ստացան նաև կրթության և գիտության նախարարության կողմից:

Հաղթող ճանաչված Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցի բոլոր 4 դասարանների աշակերտները և նրանց մարզիչներն արժանացան դրամական պարգևների:

Հուշանվերների և պատվոգրերի արժանացան նաև հինգ մրցաձևերում լավագույն արդյունքներ ցույց տված տղաներն ու աղջիկները:

Ըստ դասարանների լավագույն արդյունքներ ցուցաբերած տղաները և աղջիկները ԼՂՀ ԿԱ սպորտի պետական կոմիտեի կողմից արժանացան պատվոգրերի և դրամական պարգևների:

Թիմերի ավագները հանդիսավոր պայմաններում իջեցրին գավաթի խաղարկության դրոշը ու հրաժեշտ տվեցին իրար՝ հաջորդ տարի նորից հանդիպելու ակնկալիքով:

Նշենք, որ ԼՂՀ ԱԺ գավաթի խաղարկության հանրապետական մրցումների հաղթող դասարանները մեր հանրապետությունը ներկայացնելու են ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության եզրափակիչ փուլի մրցումներին:

Հաջողություններ մաղթենք Մեծ Թաղերի դպրոցականներին և հուսանք, որ նրանք բարձր կպահեն մեր հանրապետության պատիվը և կվերադառնան հաղթանակով:

Մուրադ ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Խոսք հիշատակի

ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍԻ

92 տարեկան հասակում երկրային կյանքին հրաժեշտ տվեց վաստակաշատ մանկավարժ, ռուսաց լեզվի և գրականության փայլուն գիտակ Պավել Ավետիսի Մեժլումյանը:

Ծնվել է 1922թ., Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղում, հասարակ գյուղացու ընտանիքում: Յոթնամյակն ավարտելուց հետո ուսումը շարունակեց հարևան Կաղարծիում: 1942-1945թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1946-1947 թթ. սովորել է Կիրովաբադի ռազմական ուսումնարանում, զորացրվել ավագ լեյտենանտի կոչումով: 1949թ. ավարտում է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի «Ռուսաց լեզու և գրականություն» բաժինը: 1949թ. աշխատանքի է անցնում Ավդուռի յոթնամյա դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցիչ: Մանկավարժական գործունեությունը սկսեց Ավդուռում, շարունակեց Հաղորտու միջնակարգ դպրոցում, որից հետո նորից տեղափոխվեց Ավդուռի ութամյա դպրոցը՝ համատեղելով Մյուրիշենի դպրոցում աշխատանքը: 1965թ. մշտական աշխատանքի է անցնում ծննդավայրում և 2003թ. հեռանում դպրոցից առողջական խնդիրների պատճառով:

Ծանր էր տանում դպրոցից հեռանալը, որովհետև չէր պատկերացնում իր կյանքն առանց դպրոցի ու սիրելի աշակերտների: Կես դարից ավել աշխատելով տարբեր դպրոցներում՝ Պավել Մեժլումյանը միշտ էլ եղել է սիրված ու հարգված ուսուցիչ իր բազմաթիվ աշակերտների ու գործընկերների կողմից: Ուր էլ որ գնացել են նրա աշակերտները, աչքի էին ընկել ռուսաց լեզվի լավ իմացությամբ: Իսկ ինքը՝ ուսուցիչը, հպարտանում էր նրանց հաջողություններով:

Նվիրված ամուսին էր, հոգատար հայր: Տիկնոջ՝ Ռայայի հետ միասին չորս զավակներ են մեծացրել, բոլորին կրթություն տվել:

Սիրում էր իր հայրենի գյուղը, հաճախ էր լինում բնության գրկում, հիանում նրա գեղեցկությամբ:

Ազնիվ էր, բարի, ընկերասեր, անսահման սիրում էր կյանքը:

Մեծ մանկավարժը մեզանից հեռացավ միայն ֆիզիկապես:

Ասում են՝ մարդը մահանում է այն ժամանակ, երբ նրան այլևս չեն հիշում: Պավել Մեժլումյանի հիշատակը վառ կմնա նրա աշակերտների, կրտսեր մանկավարժ ընկերների, բոլոր ճանաչողների սրտերում:

Մարտունու շրջանի Մյուրիշենի հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 21.05.2014թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: